

ԱՐԽՆ

ԱՄԱՍԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱԽԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶՈՐԱԾՈՐԱՆՈՐԴՈՒՄԻ ԿԱՌԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԳԱՏԵՐԱՐԱՆՈՒԹՅԱՆ



451 - ՅԱՐԵՂԻՐԵԱԿԱՆ ՏՈՐԻ - 1951

ԺԵ. ԿԱՐԴԻՆԱՆԻ ՈՐՐՈՅ ԿԱՐԴԻՆԱՆԻ ՉՈՐԱԿԱՐԱՆԻ ՈՐՐՈՅ
ՀԱԶԱՐ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՎԵՑ ՎԿԱՅԻՑՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ - ԻԵ. ՏՈՐԻ

1951

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

— Նահանգի ոգին Սփիւռքէն ներս .

հեռ

321

ԿՐՕՆԱԿԱՆ

— Անմահութեան ապահովութիւնը .

X

324

ԲԱՆԱՍՏԵՂԺԱԿԱՆ

— Օղանաւի պատուհանէն .

ԵՂԻՎԱՐԴ

328

— Փունջն այս սրղոց .

Գ. ՄՈՒՇԵՆՑ

329

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

— «Ալիի դաւնագիր»ը Գրիգոր Դարանաղցիի
«Ժամանակագրութեան» մէջ .

ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐԵԱՆ

330

ԿՐՕՆԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

— Ուսումնասիրութիւն մը Մաղափայի
Դրփին շուրջ .

ԱՆՈՒՇԱԽԱՆ ԱԲՂ. ԶՂԶԱՆԵԱՆ

332

ՊԱՏՄԱԿԱՆ

— Եղիշէ պատմագիր եւ Վարդանանց պատե-
րագիր (9) .

ՊԱՐԳԵՒ ՎՐԴ. ՎԹԱՆԷՍԵԱՆ

335

ՊԱՏՄԱ-ՓԵԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ

— Հելլեն եւ Եբրայական հասկացողութիւններ .

ԶԱԻՆ ԱԲՂ. ԶԻՆԶԻՆԵԱՆ

339

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

— Ֆրանսական քննադատութեան երեք սիւները .

Ամփոփեց
ՊԱՐԳԵՒ ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

341

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

— Հնդեւրոպական բարբառները եւ հայերէնի
գիրքը նրանց միջեւ .

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

345

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

— Դիրք եւ յարաբերութիւնք Հայ Եկեղեցւոյ .

ՇԱԽԱՐՇ ՎՐԴ. ՍԱՀԱԿԵԱՆ

348

Բարեպաշտական նուէրներ Ս. Էջմիածնի .

350

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

— Եկեղեցական-Բեմական .

350

— Պատեմական .

351

— Ամսօրեայ լուրեր .

351

ՍԻՈՆԻ Տարեկան բաժնեգինն է՝ բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 15

Redaction of the Armenian Monthly SION

Armenian Patriarchate,

P. O. B. 4001

Old City - Jerusalem

Via Amman (Jordan)

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology

Printed in

JERUSALEM

Գիտման
Ազգայնական
Մարտի — Մարտի

— Ս Ի Ո Ն —

ԻՆՏ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1951

ՆՈՅԵՄԲԵՐ

ԹԻՒ 11

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆԱՀԱՆՋԻ ՈԳԻՆ ՍՓԻԻՌՔԷՆ ՆԵՐՍ


«Հոգին է կենդանաբար,
մարմին ինչ ոչ օգնե»:

Ա.

Յաւիտենական է ճշմարտութիւնը Աւետարանին, ազգերու և ժողովուրդ-
ներու կեանքին սկզբունքը և անոնց ուժին զաղտնիքը նիւթական չէ և պիտի
չլայ երբէք: Ժողովուրդները չեն մեռնիր իրենց Ֆիզիքական վերքերէն, ալ
հոգեկանէն: Ժողովուրդի մը մեծութեան և տեղականացման փաստը, կը կայա-
նայ այն հրաշքին մէջ, զոր ան կ'ընծայէ հոգեկան արժէքներուն:

Ազգերու կեանքին մէջ յաճախագէտ են Ֆիզիքական և նիւթական աղէտ-
ները, մահացումները, սակայն վտանգը կը մեծնայ երբ ասոնց կը յաշորդէ
անգագածութիւն և անգիտակցութիւն: Մեզմէ իւրաքանչիւրի հոգիին մէջ այսօր
հակադրադրապաշտութիւն մը կայ, որ ուրիշ բան չէ բայց մեռած մասը մեր
պատմութեան, մեր անցեալին: Աւելին, այդ հոգեվիճակը կ'արգիլէ մեզ ուղիղ
կերպով դիմաւորելու մեր ներկան և հանդերձելու մեր ապագան:

Ճիշդ կերպով կարենալ ըմբռնելու համար յայտադրուած իրողութիւնը,
որինակներով խօսինք: Համաշխարհային Բ. Պատերազմին Գաղղիացիք պարտուե-
ցան դեռ պատերազմի չմտած: Եւ այս անոր համար, վասնզի Փրանսան միամտո-
ւէն հաւատաց Մաժինոյի հրաշքին, անոր անխորտակելիութեան: 1936ին շատ
քիչերուն հասկնալի էր հոգեկան այս պարտուողականութիւնը, արտաքին,
նիւթական ուժերուն կապուելու և անոնց հաւատալու այս ճակատադրապաշ-
տութիւնը: Ներքին անկարողութիւնը պատճառ պիտի դառնար որ Փրանսան
նիւթական ուժերու կապէր իր հաւատքը, խորտակելով իր մէջ իր հոգեկանին
թիւրքը, իր հերոսական թափը: Վասնզի իրական պատերազմը և մեծ յաղթա-
նակը ներքին ու հոգեկան պայքարն է, երբ մարդուն մէջ չի մղուիր հերոսա-
կան այդ գրոհը, մնացեալը անիմաստ ծէս մըն է միայն, սահմանուած ու է
կերպով վերջանալու, չըսելու համար նահանջելու:



Հիթլեր շահագործեց ֆրանսական այդ պարտուողական ոգին, «ձեզի հետ պատերազմ չունիմ» ըսելով, օրօր կարգաց իրենց, ընդարմելով մահուան քունին առաջնորդուելու պատրաստ տրամադրութիւնները: Հոգեկան այս պարտուողականութիւնը աշխարհի մեծագոյն ու ռազմիկ ժողովուրդներէն մին ողորմելի վիճակի բերաւ, հակառակ բանակին, երկաթին և նման միջոցներուն:


Ինչպէս անհատներու, այնպէս ալ ազգերու մէջ, երբ կը ծնի այն զգացումը թէ, պարիսպը, զէնքը և դրացին կրնան զինքը պաշտպանել, այլևս Աստուած ողորմի անոնց: Կ. Պոլսոյ զրաւման նախօրեակին, Բիւզանդիոն փոխանակ իր ներքին ուժերուն վստահելու, տրտում հայեցողութիւններու ի հաշիւ, իրմէն դուրս և իրմով ոչ պայմանաւոր ուժերու կը ջանար կապել իր յոյսն ու հաւատքը: Ներքին յաղթանակին այս վրիպանքը, շատ բնական է իրեն շուտով կորսնցնել պիտի տար նաև արտաքին պատերազմը, մղուած մայրաքաղաքի պարիսպներու ետին:

Անշուշտ թէ բանակը, զէնքը, պատուարը, և նման միջոցներու հանդերձանքը, անօգուտ պերճանքներ չեն, սակայն կը մնան յաճախ անօգտագործելի և անզօր, երբ անոնց ետև չկայ այն ոգին, այն ուժը որ այս բոլորը կը հրաշագործէ: Դէպի Անգլիա սպառնազին ուղղուած նաւերն ու թնդանօթները չէին որ սարսափ կ'ազդէին պաշարուող կղզիին, որքան անոնց ետևը կեցող Նաբոլիոնին հանճարը, այն ուժը որ այնքան ճարտարօրէն զիտէր անկարելիութիւններ կարելի ընելու և ձախորդութիւններ յաղթանակի վերածելու:

Հերոսական և կորովի ժողովուրդները, իրենց փրկութիւնը չեն կապեր միայն նրաժական պայմաններուն, ոչ ալ արկածախնդրութեան եսամոլ արարքին, րոմանթիզմին, այլ կարելիութեան, աւելին՝ եթէ մութ չի հնչեր բացատրութիւնը, անկարելի կարելիութեան, որ այս պարագային ուրիշ բան չէ, բայց պատկերազրուած ոգին, տեսիլքը վաղուան, ներկայի ուղին լուսաւորող: Ոգի ունեցող ազգերը, եթէ նոյնիսկ հասկնան թէ պարտութիւնը անխուսափելի է, կը շարունակեն հաւատալ յաղթանակին:

Համաշխարհային Բ. Պատերազմի նախերգանքի օրերուն, երբ քաղաքական խաղերու ոչ վարժ անռազմազէտ միտքերն անգամ կը զգային թէ Գերմանիան մութին ու լոյսին մէջ իր զէնքերը կը փայլեցնէր, բոլորին զարմանք կը պատճառէր Չէյմբլէյնի խաղաղասիրական խաղերը: Եւ այս անոր համար, վասնզի Օքսֆորտի և Քէմբրիջի ուսանողութիւնը յայտարարած էր թէ չէր ուզեր կռուիլ երկրին ու թագաւորին համար: Ստոյգ վտանգի մը պահուն խաղաղասիրական այս յայտարարութիւնը ուրիշ բան չէ, բայց ներկուած դիմակը պարտուողականութեան: Առաջի Մեծ Պատերազմին նոյն հոգեվիճակին մէջ կը ծփար նաև Ֆրանսան, սակայն Քլեմանսոն որ մեծ հոգեբան մըն էր, շատ մը ուրիշ առաւելութիւններու կարգին, հրացանազարկ ընել տուաւ այդ ոգիով տոգորուածները, և Ժողէս առաջին զոհը պիտի ըլլար, յանուն խաղաղութեան, այդ ոգին ի յայտ բերողներուն:

Այսօրուան աշխարհը, երկու ճակատներու բաժնուած, մին ի հեճուկս միւսին, իր խաղաղասիրութեան քարոզը կը կարգայ, նման մանուկներուն, եթէ խորթ չի հնչեր քսա համեմատութիւնը, որոնք իրենց վախէն կ'երգեն մութին մէջ: Այդ վախը չի բղխիր անշուշտ իրենց միջոցներու պակասէն, այլ



այն ոգիէն, որ պարտուողական ըլլալուն համար կը կեդծէ ու կը ծպտէ ինքզինքը: Ռազմական ու դիւանագիտական շարժումներն ու խաղերը, որոնք երբեմն իբրեւ սպառնալիք և յաճախ իբրեւ ներքին պաշտպանութեան երաշխիք կը ցուցադրուին, հրախաղութիւններն են միայն: Երկու կողմերէն և ոչ մին հազած է իր ոգեղէն սպառազինութեան զրահը, և իրենց երիվարները զորս վազցնել կը փորձեն, փայտէ կը թուին ըլլալ, զուրկ ոգեկան ինքնահաշտ ուժէն և զօրութենէն:

Պարտուողական է ոգին, երբ հաշտ չէ ինքզինքին հետ, երբ խորապէս չի հաւատար այն հրամանակարգերուն և իտէալներուն, որոնց դրօշին ներքեւ կը յաւակնի կռուիլ: Ի վերջոյ գինուորին զգեստն ու զէնքը չեն որ զինքը հայրենիքի պաշտպան կը կացուցանեն, այլ անոնց ներքեւ այդ ոգին զգացող և տրուփող սիրտը: Երբ մանաւանդ խորապէս չի զգար արժէքը այն իտէալներուն, որոնք վերացական տեսութիւններ և սկզբունքներ ըլլալէ առաջ, մեր երակներուն մէջ շարժուն արիւն են եղած և մեր ուղեղին մէջ բացխփիկ լոյս:

Տակաւին երէկ, աշխարհը հինգ տարիներ անընդհատ արիւնով թաթախուեցաւ, իբր թէ յանուն ազատութեան և ժողովուրդներու երջանկութեան: Սակայն այդ ահաւոր աղմուկը և անկշռելի զոհողութիւնները եղան որոշելու համար թէ ո՞վ պիտի ունենար աւելի մեծ ածրւ մը և աւելի լեցուն քսակ մը: Ինչ որ տարուէ տարի և շրջանէ շրջան տակաւ կը հալի այս ալէկոծումին մէջ, մարդուն լաւագոյն կէսին՝ հոգիին նաւարեկութիւնն է: Եւ պատերազմներու բերումով ստեղծուած խոր անգթութիւնը, անարդարութիւնը և իրարու նկատմամբ շատցող անլիստահութիւնները տակաւ այլատեքման կ'առաջնորդեն միաժն ու հոգին մարդուն, ստեղծելով պարտուողական հոգեբանութիւն մը, հաւասար՝ արժէքներու նկատմամբ անտարբեր ու անզգած ըլլալու տրտում տրամադրութեան, բեկումին:

Արդի աշխարհը կ'աճապարէ մտնելու շրջանի մը մէջ՝ ուր նուազագոյն քանի մը հազարամեքու ամենասրտառու ճիգերու զինք եղող մշակոյթը և զգալու և խորհելու արևոտ մտապատկերները վտանգուած կը թուին ըլլալ: Այլապէս քսաներորդ դարու մէջ զազաններու նման գիրար փողոտելու համար չէր որ մարդիկ մեկնեցան հնութեան ամենախորունկ քարայրներէն, դալու և հասնելու այսօրուան մոայլին, յոռի շրջանառութեան մը տխուր շրջադարձին: Կը վերջացնենք արտմօրէն, Խմբագրականներու շարքի մը իբր Յառաջաբան ծառայող այս ընդհանուր ակնարկը, ըսելով թէ աշխարհը նահանջի մէջ է, վասնզի ոչ միայն խարդախուած են մեր բարոյական արժէչափերը, այլ նաև արժեքըրկուած մեր իտէալները, նիւթացնելով ու փոքրելով մեր հոգին ու լեցնելով զայն սարսափով, անզգածութեամբ, յաճախ ճակատագրապաշտութեամբ, այսինքն պարտուողականութեամբ:

ԿՐԹՆԱԿԱՆ

ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ

Բայց մինք յաւիտենական կեանքը յղանալով Անհայր աշխարհի մը սահմաններուն մէջ, անկէ կը սոսկայ ինչպէս միջնադարեան քրիստոնեայ մը կը սոսկար Դժոխքէն. մինչդեռ միւսը, աղաղակելով որ մահը չի կրնար մեզ զատել Աստուծոյ սէրէն, կը պահանջէ զայն իբրեւ ներշնչում մը և յոյս մը: Պոստոյականութեան մէկ ուժը սա իրողութեան մէջ է որ մշտնջենական, ինքնազիտակից գոյութեան գաղափարը, որ յաւիտենական դարերուն մէջէն իր ետեւէն կը քաշէ ամբողջ յիշողութիւնը բոլոր նախնիքաց փորձառութեան և անկէ երբեք չի կրնար խուսափիլ, զայն երեւակայել Զանացող մարդուն կը պատճառէ այն զոր բրոֆէսէօն կոչուիին Սմիթ կը կոչէ «մտաւոր գիտութեան» Մարդկային միտքը այնչափ անկարելի կը գտնէ զգալ այն յղացումը որչափ մաթեմատիքի մէջ անկարելի կը գտնէ անհունութիւն ընել հաւասարութեան անգամ մը առանց անվաւեր ընելու արդիւնքը: Ունէ մարդի մէջ մարդկային միտքը չի կրնար զբաղիլ բացարձակ անհունութեամբ: Թէ ինչ կրնայ ըլլալ Աստուծոյ նպատակը անձնական յաւերժութեամբ, մեր ներկայ կարողութենէն վեր է պատկերացնել կամ հասկնալ զայն. մարդուն միտքը չի կրնար օգտակար կերպով հետազոտել, բայց այն հաւատով թէ տիեզերքը բարեկամական է, կուգայ այն հաւատքը թէ ան անվերջ յառաջգիմութիւն կ'առաջագրէ մեզի համար, և ասիկա բաւական է, առանց աւելի գիտնալու, աւելի խոր մարդկային պէտքերուն համար:

Հետեաբար, մարդ ուրիշ ալ սկսի, գիտական հաստատութենէն թէ տիեզերքը բանաւոր է կամ կրօնական հաւատքէն թէ տիեզերքը բարեկամական է, ան կը յանգի անխուսափելիօրէն այն համոզման թէ մահը չի վերջացներ ամէն բան: Անմահութեան ապահովութիւնը հիմնուած է մեծ հիմքերու

վրայ: Ստեղծագործութեան բանաւորութիւնն ու բարերարութիւնը մարդուն անհասցման գէժ երաշխիք են:

Ե. — Անմահութեան հաւատքին համար ուրիշ պատճառներ, հիմնական կարեւորութեան կողմէ, չեն բաղդատուիր այն պատճառներուն հետ որոնք յիշուեցան, բայց կան առնուազն երկու յաւելուածական նկատողութիւններ որոնք մեծ չափով կը ձգտին հաստատել յաւիտենական կեանքի վրայ հաւատքը: Թէ տիեզերքը բանաւոր է և բարերար և այդպէս ստուգիւ պիտի պահէ իր բարոյական շահերը, արժէքի դատողութիւն մըն է զոր ընելով մէկ անհատ, առանց ուժ գտնելու իր նմաններէն, կըրնար անապահով զգալ ինքզինքը: Պէժհովէնի կեանքին զլխաւոր գէպքերը կրնան այնչափ յատկօրէն ստուգուիլ խուզարկուի մը կողմէ որ, ուրիշ մը իրեն համակարծիք ըլլայ կամ ոչ, ինք համոզուած կը մնայ: Բայց թէ Պէժհովէնի երաժշտութիւնը զեղեցիկ է, ծայր աստիճան դժուար պիտի ըլլար քննադատի մը համար պաշտպանել, եթէ զեղեցկազիտական մարդին մէջ դատաստան ընելու ամենէն ձեռնհասները պնդէին թէ հատանուագները (սօնաթ) խեղճ բաներ էին:

Եթէ այս փաստին բնոյթը հետազոտելու ելլէք, պիտի գտնէք որ մարդիկ կ'աշխատին ապացուցանել թէ Ռաֆայէլի Սիսթինէ Մատոնա կոչուած նկարը փառաւոր է, ասոր վրայ դուք պիտի տեսնէք որ նրկարը ոչ նուազ կախում ունի ամենէն ձեռնհաս քննադատներու միջև կարծիքի, գատաստանի համաձայնութենէն: Եթէ, հետեաբար, մարդ մը, զգալով որ տիեզերական կարգին շուրջ իր հաւատքին համար, ինքզինքը մինակ գտնէ այդպիսի գնահատութեան մը մէջ, մինչ ցեղին տեսանողները իրեն գէժ շարուած, առաջ պիտի մըղէին իրենց հակառակ դատողութիւնները, պէտք պիտի ըլլար գրեթէ անմատչելիօրէն հերոսական յամառութիւն մը կարծիքի պնդելու համար թէ ինք իրաւունք ունի: Միւս կողմէ ո՞վ կրնայ հաշուել զրաւան ազդեցութիւնը մեր հաւատքին վրայ, եթէ դատողութիւնը որուն հասած ենք ոչ միայն ընդգիմութեան չը բաղխիր, այլ ապշեցուցիչ միաձայնութեամբ ուժ կը գտնէ հեղի-

նակութեամբը այն հոգևոր տեսանողներուն որոնք ամենէն խորունկ տեսած են կեանքի նշանակութիւնը:

Հեղինակութեան այս գործածութիւնը ամենեւին անբանաւոր է: Նոյնիսկ գիտութիւնը, որուն մարդէն վտարուած է հեղինակութիւնը վարդապետականութեան իմաստով, կ'ողջունէ հեղինակութիւնը կարող և անշահադրգիւ փորձագէտներուն կարծիքներուն: Բոլոր միլիոններէն քանի մը հոգի որոնք կը հաւատան իրողութիւններուն, չափած են երբեմն արեւին 92.000.000 մղոն հեռաւորութիւնը կամ իրենք իրենց համար խորացուցած են զաղանիքները գիտական տեսութիւններու, որոնք, փորձագէտի հեղինակութեամբ ընդունուած ըլլալով, կը գործածուին առօրեայ գործի մէջ: Եթէ մարդ մերթէր գործածել ոեւէ ծանօթութիւն զոր ինք անձամբ փաստած է, պիտի ապրէր ցաւազինօրէն նիհար և վտիտ տիեզերքի մը մէջ: Երբ կը հաւատայ Մ. Էտիսընի հաստատ խօսքերուն ելեքտրականութեան մարդին մէջ, ընդհանրապէս պատճառն այն է որ որովհետեւ ինք ապացուցած է զանոնք, այլ որովհետեւ կը վստահի Մ. Էտիսընի ճարտարութեանն ու պատուաւորութեանը վրայ, կը գտնէ ինչ որ ինք պիտէ ելեքտրականութեան մասին ոչ թէ ժխտուած, այլ լուսաբանուած և ամբողջացած՝ մասնագէտին կարծիքներով, և կը հաստատուի իր հաւատքին մէջ շնորհիւ այն գործնական արգիւնքներուն որոնց յայտնապէս կը հասնի Մ. Էտիսըն իր ճշմարտութիւններուն հիման վրայ: Նոյնիսկ գիտութեան մէջ մարդ չը կրնար դիւրաւ չափազանցել փորձագէտին հեղինակութեան գործնական կարեւորութիւնը:

Գիտութեան մէջ հեղինակութեան այս գործածութիւնը, սակայն, աննշան է բաղդատմամբ անոր գործածութեանը մարդկային կեանքի աւելի բարձր թռիչներուն մէջ ուր արժէքի դատողութիւնները անհրաժեշտ են: Ինչպէս կ'ըսէ Պրատեիսիկ.

«Մեկ խմաստուն մարդուն վճիռը
կը գերակշռէ բոլոր յիմարեանքը»:

Եթէ գիտական տեսութեան մը հաստատութեան մէջ ամբողջ Ասիան ու Ափրիկէն ոչինչ կ'արժեն, և անորակեալ մարդոց

զանգուածները զուր կը բողոքեն և կ'ուրանան, որովհետեւ մասնագէտները որոնք իրապէս կը ճանչնան տեսած են ճշմարտութիւնը և այդ մասին խօսած, ո՛րչափ աւելի գեղեցիկ երաժշտութեան, նկարչութեան և ճարտարապետութեան զնահատման մէջ բույթ աչքերով մարդիկ կը թօթուեն իրենց ուսերը առանց տպաւորուելու, և անզգայ միտքեր զուր կ'աշխատին զնահատել շնականութիւնը (Իմաստասիրական վարդապետութիւն որ կը կայանայ հաճոյքը ցուցամոլիկ կերպով արհամարհելու և պատշաճութիւնները հեգնելու մէջ): Տեսանողները փաստողներն են աշխարհի արժէքին դատաստաններուն: Ոչ միայն կրօնական ճշմարտութեան մէջ, այլ գեղեցիկութեան և բարութեան ամէն հոգեւոր ձեռնարկներու մէջ, մենք, սովորական մարդիկ, կը կանգնինք զառիթափին վրայ և կը պոռանք կատարին վրայ եղողներուն թէ իրենց աւելի լայն տեսողութեամբ մեզի մեկնելու պարտաւոր են կեանքի իրական ճշմարտութիւնը:

Մարդոց հաւատքը անմահութեան վրայ, հետեւաբար, անհունօրէն հաստատուած է հոգևոր տեսանողներուն (գուշակ) վկայութեամբ: Անոնք ջախջախիվ միաձայնութեամբ կը վկայեն իրենց հաւատքը բանաւոր աշխարհի մը մասին որ Ձմեղ պիտի չթողու փռլին մէջ»։ Եթէ մենք խորհուրդ կը փնտռենք հրէա-քրիստոնէական զարգացման սահմանէն դուրս ամենէն իմացական ոգիէն, կը լսենք Սոկրատը որ կ'ըսէ Պլատոնի բերնով. «Ուրեմն կասկած չկայ որ հոգին անմահ է և անկորնչելի և ճշմարտապէս գոյութիւն պիտի ունենայ ուրիշ աշխարհի մը մէջ»։ Եթէ խորհուրդ փնտռենք այն հոգևոր Տիրոջմէն որ ամենէն աւելի կը թուի իր մէջ պարունակել զազափարականները բոլոր դարերուն, բոլոր ցեղերուն, երկու սեւերուն, բոլոր տարիքներուն, ինչպէս զուտ ճերմակ լոյսը կը ժողվէ և կը խառնէ լուսապատկերին ճեղքը և մասնակի գոյները, կը լսենք զինքը որ կ'ըսէ կատարեալ վստահութեամբ. «Իմ հօրս տանը մէջ բազում օթեաններ կան»։ Թաճախ առաջ կը քշուի այն փաստը թէ ամէն տարիքէ ամէն մարդու կողմէ բռնուած տիեզերական հաւատքը անմահու-

թեան մասին, կը զօրացնէ անմահութեան ճշմարտութեան վարկածը, թէ եթէ ֆիզիքական կեանքի նմանութիւնը ճիշդ է, տեղեկեական մարդկային գործողութիւն (functioning) գոյութիւն չունի առանց զայն գոյութեան կանչելու առարկայական իրողութեան, այնպէս որ առանց ուրիշ աշխարհի մը գոյութեան գրգիռին, անհասկնալի է որ բոլոր ցեղերը անոր հաւատային: Բայց այս փաստը, հիմնուած մարդկութեան ընդարձակ, մութ զանգուածներուն հաւատքին վրայ, մինչ իր տեղն ունի, համոզման զօրութեան կողմէ չը բաղդատուիր նկատողութեանը հետ այն մեծ հոգիներուն, որոնք մեր մարդկային կեանքի հասարակ մակարդակները շատ վեր բարձրացնելով, իրենց բարձրութենէն մեզի ապահոված են, ոչ նուազ վստահութեամբ, այլ միշտ աւելի զրականօրէն ինչպէս իրենք կեցան աւելի բարձր հոգեւոր աստիճանին վրայ, թէ յաւիտենական կեանքը ճշմարիտ է: Մինչև որ Գերմանիա ուրանայ թէ Քանդի նման մարդիկ իր խորատես մարգարէներն են. մինչև որ Անգլիա ընտրէ իր Ուօրտսփօթնէն, Պրաունինկէն և Թէնիսընէն աւելի փոքրագոյն հոգիներ ներկայացնելու համար իր ամենէն վեհ մ հոգեւոր թափանցողութիւնը հասկացողութեամբ. մինչև որ Ամերիկա ըսէ Էմբրօնընի, Հուիթիէի, և անոնց նմաններուն թէ անոնք մեր տեսանողները չեն. մարդիկ պէտք է խոստովանին թէ սքանչելի միաձայնութեամբ ցեղին ամենէն բարձր և ամենէն աւելի տեսանող հոգիները հաւատացած են անմահութեան: Ոչ թէ պզտիկ հոգիները, այլ «տիրաբար մեծ սահմանի մէջ» գտնուող մարդիկ ամենասուր կերպով զգացած են յաւիտենական կեանքի անհրաժեշտութիւնը, բանաւորութիւնը և ապահովուած ստուգութիւնը:

Արդ, տեսանողներուն ուղղուած այս կողը իր ամենախոր նշանակութեան մէջ չէ կոչ մը առ արտաքին հեղինակութիւն: Ինչ որ ամենէն մեծ մարդիկ սովորաբար կը զգան է այն զոր հասարակ մարդիկ կը զգան իրենց մեծագոյն պահերուն: Տեսանողներուն ուղղուած կողը կոչ մըն է պարզ մարդուն լաւագոյն ժամերուն: Բրօֆէսէօր թինտալ, եզականօրէն ի վեր հանող նախագասութեան մը մէջ, կ'ըսէ. «Ինքնազննութեան տարիներուն զիտած եմ որ

պայծառութեան և կորովի ժամերու մէջ չէ որ այս վարդապետութիւնը (նիւթապաշտի) ինքզինքը կը պարտադրէ իմ մտքիս. որովհետեւ աւելի զօրաւոր և աւելի առողջ խորհուրդի ներկայութեանը անկաւ միշտ կը լուծուի և կ'անհետի, իբրեւ լուծում չի տուող այն խորհրդաւոր գաղտնիքին որուն մէջ կը բնակինք և որուն մէկ մասը կը կազմենք»: Այսպէս ամէն մարդ զիտակից է իր քաջայայտ բարձր պահերուն, երբ երկիրը կը բարձրանայ իր ոտքերուն տակ և ինք ժամանակուան համար կը հասնի հոգեւոր բարձր տեղ մը, ուրկէ հորիզոնները տեսանելի են և հեռապատկերները կը մնան պայծառ որոնք սովորական օրեր իր տեսութեան մէջ չեն: Յեղին մեծ հոգիներուն վճիռը մեզի համար հեղինակութիւն ունի որովհետեւ անոնք ուրիշ բան չեն ըներ եթէ ոչ կը հաստատեն մեր սեփական բարձր ժամերուն տեսիլքը: Ամենէն նշանակալից ընտրութիւնը զոր վերջապէս ամէն մարդ կ'ընէ, իր անձնական ցած և բարձր պահերուն միջև է, իբրեւ մեկնիչները կեանքի ճշմարիտ նշանակութեան: Երբ հետեւաբար մարդ կը զիմէ իր ամենալուրջ պահերէն իր լաւագոյն պահերուն, հարցում կ'ա՞յ թէ ինչ է որոշումը յաւիտենական կեանքի և բոլոր իր կցօրդութիւններուն (implication) նիւթին վրայ: Մարդ իր լաւագոյն պահերուն կը ձգտի մտածել թէ ինք մարմին է անցաւոր մտաւոր տեսքով, թէ չկան մշտնջենական գորութիւններ բացի ֆիզիքական գորութիւններէն որոնք կը շինեն արեգակնային զրութիւնները և կը կործանեն զանոնք. թէ երկիրը գերագոյն անհողութեամբ կը ցրուէ անհատականութիւնը, իր ամենաթանկագին գանձը, և երբեք չորոշեր ներդաշնակել իր անարդարութիւններուն աններդաշնակութիւնը: Մարդ իր լաւագոյն պահերուն մարդկային կեանքի մէջ ո՞չ մէկ ներքին և յաւիտենական արժէք կը զգայ զոհողութիւն ներշնչելու հոգեւոր օրակի համար անհատին մէջ և հիմք հայթայթելու ցեղին բուռն և յուսալից ծառայութեան համար: Ամէն բանէ աւելի, մարդ իր ամենաողջամիտ, ամենաարժանաւոր պահերուն, կը յօժարի՞ մտածել թէ տիեզերքը չպահպաներ ոչ մին բարոյական շահերէն որոնք արժած են այնչափ անհաշուելի գին մը արիւնի և արցունքի և յոգնութեան: Ան կ'ուզէ՞

ընդունել իբրև իր տեսութիւնը տիեզե-
րական նշանակութեան Թօմբսօնի նկարա-
գրութիւնը աշխարհի մը մասին որ անհոգ
ձեռքով կը նետէ իր արտադրած հոգեւոր
կատարելագործութիւնները:

«Աշխարհը ջաղացքի մը պէս յաւիտեան
կրոր կը դառնայ,
Ան կ'աղայ կեանք եւ մահ, եւ քարիք եւ
չարիք,
Ան ոչ նպասակ ունի, ոչ սիրտ, ոչ միտք
եւ ոչ ալ կամք:

«Մինչ Միջոցին օղը եւ ժամանակին լե-
ցուն գեղը կը հոսին
Ջաղացքը այսպէս կուտարար պիտի դառնայ
անդադրում.
Թեհեւ մաշելով հասնի, քայց ո՞վ կրնայ
գիտնայ:

«Մարդ մեկ քան միայն կրնար գիտնայ երեւ
իր տեսողութիւնը նուազ աղօս ըլլար.
Թե ան չի դառնար յարմարելու համար իր
փոքրիկ փնտնան ճաշակին,
Թե ան անսարքեր է իրեն.

«Աւելի ըլլալով ան գիտնէ շարաշար կը
գործածէ, ինչպէս կ'ըսէ ինք:
Ան կ'աղայ գիտնէ դառն կեանքի քանի մը
մեղմ տարիներ,
Յետոյ դարձնալ կ'աղայ գիտնէ յաւիտեանա-
կան մահուան մեջ»:

(Շարունակելի)

Այդ է տիեզերքին ճշմարտութիւնը,
ինչպէս մարդու մը լաւագոյն ժամերուն
մէջ ան կող կ'ընէ անոր: Յաւատ առողջ
միտք մը հուսկ ապա պիտի բողոքէ անօ-
գուտ ստեղծագործութեան մը դէմ, որ ինչ-
պէս Բրօքլէսէօր ձէյմըս կ'ըսէ, նոյնչափ
լաւ կրնար, գլխիւսդ չըջուած շարժա-
պատկերի մը պէս, ուէ կերպով վազել, ո-
րովհետեւ ոչ մէկ իմաստ ունի եւ ոչ մէկ տեղ
ի լոյս կ'ընծայուի: Պատահական հակա-
ճառութիւնները փաստելու համար անմա-
հոթութիւնը եւ ատկէ անոր անհրաժեշտ ան-
մահութիւնը այլ ևս չեն շահագործուի մարդ-
կային միտքը. պարզ շարունակութիւնը հո-
գեւոր գոյացութեան մը, անմահ, որովհետեւ
էապէս անբաղադրեալ է և հետեւաբար ան-
ջընջելի, մինչ և անգամ փափաքուած չէ,
բայց ցեղին գործօն, հոգեւոր արժէքներուն
պահպանութեան բաղձանքը չի կրնար սե-
րունդէն աւելի արագ ածիլ: Մասնաւոր
փաստերու եւ ամբողջ իմաստասիրական դը-
րութիւններու մահը կը թողնու այդ խնդիրը
տակաւին կեդրոնական եւ տիրապետող: Ա-
հաւաստի, վերջապէս, ամբողջ հարցին դժ-
ուար կէտը, թէ ոչ մէկ մարդ այն ժամե-
րուն երբ ինք իմացականօրէն և հոգեւորա-
պէս իր լաւագոյն ժամերուն մէջ կրնայ յօ-
ժարիլ, առանց բռնաբարելու իր ամենա-
խոր բնազդները, հաւատալու աշխարհի մը
որ կը կորսնցնէ բոլոր իր շահերը, աշխարհ
մը որուն մէջ մեր կամեցած կամ յուսացած
կամ երազած բարիքներէն ոչ մին գոյու-
թիւն պիտի ունենայ: Առանց անձնական
յաւերժութեան ուէ ձեռն անխուսափելի կը
թուի տիեզերական գնացքին (բրօսէս) այդ
եւքը:

X

Օ Դ Ա Ն Ա Ի Ի Պ Ա Տ Ո Ւ Հ Ա Ն Է Ն

Դա՛ւժ է ամպերու,
Կարծես դարերով հոն է տեղացեր
Երկինքն իր ձիւներ,
Մեր աշխարհէն վեր,
Կազմելով անհուն անսովոր պատկեր:

Ամպեր գանգրաներ կը վազեն հեռուն,
Կազմած կարաւան,
Ճերմակ ուղտերու, փիղերու նըման:
Երբեմն ալ սակայն,
Խաղաղ ու անճարժ,
Յաղթանակներու
Կարծես յուշարձան:

Հսկայ ինքնաթիռ,
Որսն իր հալածող քոչունի հանգոյն,
Կը սուրայ անդուլ:
Ամպի ալիքներ,
Մըռուռի քելով կը խոյանան վեր,
Օդանաւի շուրջ հիւսելով պատեր:

Ճերմակ է դա՛ւժը մահուան պատանձով,
Ջուր, կանաչ, քոչուն,
Մարդ եւ անասուն,
Յաւերժ ախորժած,
Կ'ընեն աշխարհն այս կարծես փառացած,
Վըհուկի մը մեծ գաւազանին տակ:

Ու ինձ կը քրի,
Կապոյտներուն մէջ այսպէս առկախուած
Երազն այս սասափ,
Լուսնկայի մը դազաղը անհուն,
Որ նոր է մեռած:

12/8/51

Ե Ղ Ի Վ Ա Ր Դ

ՓՈԻՆՁՆ ԱՅՍ ՏԸՂՈՅ

ՄԻՔԻ ԼՆՆԻՔԻՆ

Փունջն այս սրղոց հաւաքուած, — Տէր-Ձօրի սեւ արգանդէն
Հէ՛ք ծընունդներն երկունքի —, երէկ ւրսով մը առողջ
Փարեցան ինձ: Խենքի պէս զիս ինքզինքնս ամբողջ,
Ձերք հընախոյզ դողացող գանձին վրայ նիւթեղէն:

Սրսով պարզուկ, հոգւով նիղն, ու քայլերով հեւացող,
Եղան ընկեր ինձ լծուած *քրոջային* սուրացող
Գինովի պէս. ու սրբած ծով նակասնին ֆրճաբոր,
Հասան բարձունքն երազի, ճաժանակիր բայց անդորր:

Մերք մօտեցայ ես անոնց, ինչպէս մարդը մեղաւոր
Կ'երբայ սուրբի մասունքին: Չը պահեցի ոչ մէկ բան.
Տըւի իրենց ժառանգէս, որ ըլլան մեծ ու ազուր:

Թիքեռնիկի թիռ առնող կայսառ սրղու աշխուժով,
Իրենց նիզին մէջ այսօր, չե՛ն նըմանիր երէկուան,
Յառած վաղուան նայուածքին, ա՛լ կը քայլեն ապահով:

2 Նոյ. 1951
Երուսաղէմ

Գ. ՄՈՒՇԵՆՅԱՆ



ԲԱՆԱԿԱԳԻՐԱԿԱՆ

«ԱԼԻԻ ԴԱՇՆԱԳԻՐ»Ը

ԳՐԻԳՈՐ ԴԱՐԱՆԱՂՑԻԻ

“ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ, ՄԷՋ

Յ.

Դարանաղցի ժամանակագրության մէջ յալի և ալի միանոյն բառն են։ Դարանաղցի, ինչպէս ուրիշ գրողներ, ձայնաւորով և մանաւանդ առիւթ սկսող բառերէն առաջ երբեմն կ'աւելցնեն յ տառը։ Դարանաղցի հաւատարմագէտ կը գործածէ ամբ և յամբ, արապ և յարապ, արգ և յարգ, ցեղապիւմ և ցեղապիւմ⁽¹⁾։ Հրատարակիչն ալ այսպէս հասկցած է արդէն։

2. Ալի արարերէն փոխառեալ թուրքերէն ալի բառն է, որ «բարձր» կը նշանակէ։ Ալի յատուկ անունն ալ նոյն բառն է։ Դարանաղցի հրատարակիչը ալի կարծած է ալի-ին բարբառային կամ աղաւաղուած մէկ ձևը, ինչպէս քալի և քալի փոխանակ քալա։ Դարանաղցի գրչին տակ ալի և յալի ալի-ին սեռական հոլովն են⁽²⁾։

3. Ալի մանուր չի նշանակեր «բարձրագոյն հրովարտակ», ինչպէս թարգմանած է Մեսրոպ Վ. Նշանեան։ Եթէ երբեք ալի ածականը կարենար տրուիլ մանուրին,

(1) Ուրիշ գրողներէ օրինակ մը. յարապս փոխանակ արապս։ Այս յոն «որոշ բարբառներ յատուկ մի հաղագային շունչի փոխարէն է և ոչ յ նախդիրը. երբեմն յ-ի փոխարէն պատահում է նաև հ. օր. «պատուելի հայրս (այրս) այս»։ (Մեսրոպ Վ. Մատթուտեանց, Հաւաքեալ անուանց կարօղիկաց (Աղթամարայ), էջմիածին 1916, էջ 77, ծան. 1.

Յայտք, յայլամ, յայլէ, յարաք արարերէնէ փոխառեալ բառերուն օկիզը գրուած յ տառն ալ նոյն երևոյթը կը պարզէ (Տես այս բառերը Անուանիկի Արմատական Բառարանին մէջ)։

(2) Թուրքերէնի մէջ ալի (الي) գործածուած է միայն իբրեւ արական անձնանուն, իսկ ալիյէ (اليه) իզականը՝ միայն իբրեւ ածական։ Արական ածականն է ալի (الي), Այս տարբերութիւնը (ալի և ալի) հայերէնի մէջ ընդհանրապէս չէ նշուած։ Ալի ալ հաղագայի պօրէն գործածուած է իբրեւ անձնանուն։

Թուրքերէն ըսուած պիտի ըլլար մանուր-ը ալի⁽³⁾, և Դարանաղցի գրած պիտի ըլլար մանուր ալի կամ մանուր ալի, ինչպէս խաք-ի քարիք-ի փոխարէն գրած է հասի քարիք (էջ 264) և խաք-ի հիւմայուն-ի փոխարէն՝ հասի հումայ կամ թերեւ հասի հումայուն (էջ 366)։

Դարանաղցի գործածած թուրքերէն բառերուն մեծագոյն մասը (ժամանակագրության մէջ գործածուած բոլոր արարերէն և պարսկերէն բառերը արար և պարսիկ լեզուներէն փոխառեալ թուրքերէն բառեր են և ո'չ թէ ուղղակի արարերէն և պարսկերէնի աղղեցութեան տակ հայերէնի մէջ մտած արարական և պարսկական բառեր) կամ օրինական բառեր են, կամ պետական պաշտօնագիրներու մէջ գործածուած բառեր, զոր նոյնութեամբ գործածած է պաշտօնագրին բովանդակութիւնը ըստ կարելւոյն հարազատօրէն ներկայացնելու նպատակով, և կամ թրքախօս անձներու կողմէ արտասանուած են եւ հարազատութեան մտահոգութեամբ հայերէնի չեն թարգմանուած։ Հետեւաբար, եթէ թուրքերէնի մէջ գործածուած ըլլար մանուր-ը ալի ասուած թիւնը, Դարանաղցի նոյնութեամբ փոխադրած կ'ըլլար հայերէնի մէջ, իբրեւ պաշտօնագրի մը պաշտօնական յորջորջումը։

Բայց, ինչպէս նոյնինքն Դարանաղցի կը յայտարարէ, թուրքերը այդ գրութեան կուտային ո'չ թէ մանուր, այլ անհնամա («գաշնագիր») անունը (էջ 133, տես նախորդ յօդուածիս մէջ 1, Ա) և ուրիշ տեղեր ինքն ալ անհնամա կը կոչէ զայն⁽⁴⁾։

(3) Արքայական ածականն է հիւմայուն (حیومی) և կ'ըսուի, օրինակի համար, բեւմ-ի գրադար-ի մեմուր-ը հիւմայուն «կայսերական հրովարտակի ընթերցման հանդէս»։

(4) Թէ Մուհամմատի, Օմարի կամ Ալիի կողմէ քրիստոնեայ հասարակութեանց շնորհուած արտօնութեանց հրովարտակներ անհնամա կը յորջորջուէին՝ կը հաստատուի, ի մէջ այլոց, այն զատաւարութեան արձանագրութեամբ, զոր հրատարակած է Տիգրան Ն. Թ. Սաւալանեանց (Պատմութիւն Երուսաղէմի, 1931, Բ., 877) Հայոց և Յունաց միջև Երուսաղէմի Ս. Տեղեաց = սեպհականութեան մասին ծագած վէճին առթիւ։ Ապա Յոյները նորէն մէջտեղ կը հանեն Օմարի կարծեցեալ հրովարտակը. երբ ան ալ կը մերժուի իբրեւ անվանք և անկարեւոր, այն ատեն յուզուած կ'ըսեն. «Ասիկա Հազրէթ-ի Օմարի դաւանա-

4. Թէ Դարանաղցիի գրչին տակ ալի և յալի բառերը Մուհամմատի զարմիկին և փեսային՝ Ալի պէն Ապու Թալիպի անունն են միայն և ոչ թէ «բարձր» ածականը՝ կը հաստատուի ուրիշ փաստերով ալ:

Ալի մանուրը կամ անհաման վճռական զեր մը կը կատարէ, զեր ի վեր համարուելով սուլթանական հրովարտականքէն, հետևաբար՝ վերջիններէն տարբեր՝ նուիրական բան մըն է: Այսպէս, էջ 133, բոլոր վէզիրները և, էջ 157, էրզրումի փաշային քեհեան կը համբուրեն զայն, — էջ 151, թագաւորական հրամանագիրներէն աւելի պարտադրիչ կը համարուի Քեմալի զատարանին մէջ, — էջ 155, Տիվրիկի զատարանին մէջ անոր տեսքը սոսկում (անշուշտ խոր երկիւղածութիւն) կ'ազդէ և յատենկայս կը կարգացուի (ինչ որ չէ ըսուած սուլթանին հրամանագիրներուն համար), — էջ 155, անոր ընթերցումէն վերջ զատաւորները կը քաղցրանան և անպարտ կ'արձակեն ամբաստանեալը, — էջ 157, էրզրումի փաշային քեհեան, զայն համբուրելէ ետք, աչքերուն վրայ կը դնէ, ինչ որ երկիւղած յարգանքի գերազոյն արտայայտութիւն մը ըլլալէ աւելի աստուածային շնորհի մը արժանացած ըլլալու ժես մըն է:

Նոյնիսկ երբ Դարանաղցի մանուր կ'անուանէ այս գրութիւնը, անոր կը կցէ «մեծ» ածականը («Յալէ մեծ մանշուրն», էջ 133), ցոյց տալու համար թէ սովորականէն տարբեր բան մըն է և ոչ՝ հասարակ «մանշուրն» մը: «Մեծ» բառին ներկայութիւնը «յալէ»ին քով կը հաստատէ նաև թէ «յալէ» «բարձր» նշանակութեամբ չէ որ գործածուած է:

Գրութիւնը համբաւը ունի «Ալիի ձեռագիր»ը ըլլալու (էջ 157): Դարանաղցի զայն կը կոչէ նաև Ալի գիր (էջ 151, 154, 156 (երկու անգամ) և 211 (երկու անգամ)), թէև «գիր» հոս անհրաժեշտաբար «ձեռագիր» չի նշանակեր, այլ կրնայ նաև «պաշտօնագիր», գրութիւն» իմաստը ունենալ:

գիրն է, զոր պարտաւոր էք հիմ բռնել և ըստ այնմ վճիռ արձակել: Հայերը, «երկու համագորտերութիւնները միայն զաշնագիրներ կը փոխանակեն իրարու մէջ. իսկ հպատակ ազգերու զաշնագիրը զլիսահարկի թուղթն է մեր. ինչպէս ուրեմն կը յանգչիք դաւնագիր անունը տալ այս տեսակ թուղթերուն»:

Բայց ամէն պարագայի մէջ կը նշանակէ կամ Ալիի ձեռագիրը և կամ Ալիի հրամանով գրուած պաշտօնագիր:

Վերջապէս, էրզրումի փաշային քեհեան այդ գրութիւնը կարգալէ ետք այնպիսի վարմունք մը կ'ունենայ որ իբրեւ թէ «նոյն ինքն Ալին տեսած ըլլար» (էջ 157):

Այս ամէնը անտարակուսելի կերպով կը հաստատեն թէ ալի մանուրը կամ ալի անհաման ո՛չ թէ սուլթանի մը կողմէ շնորհուած մանուր մըն էր, որ կը հաստատէր առանձնաշնորհ մը, ասպահարկութիւն մը, իրաւունք մը կամ արտօնութիւն մը, այլ այսպիսի արքայական պաշտօնագրէ մը իսկ աւելի բարձրարժէք գրութիւն մը: Եւ որովհետեւ այս գրութիւնը բնորոշող բառը՝ անհաման սուլթանի մը կողմէ շնորհուած հրովարտակի մը չի պատշաճիր և զայն որակող բառը՝ ալի կամ յալի չի կրնար «բարձր» նշանակել, բացատրուած պատճառներով, այլ միայն կրնայ ըլլալ Ալի անունը, Դարանաղցիի յիշած գրութիւնը Ալիի զաւնագիրն է:

Ալիի զաւնագրին նկարագրութիւնը

Դարանաղցի նկարագրած է «Ալիի զաշնագիր»ն ալ:

Էջ 154-155 կը գրէ. «Սոսկայ ի տեսլեան զարմանակերպ գրոյն, որ երեք ազգ լեզուաւ էր գրեալ»⁽⁵⁾ արձանագրով, որ իւրեանք քոֆի ասեն, և յարապ գրով զուտ կարմիր և թուրք գրովք»:

Դարանաղցի կամ այստեղ «լեզու» բառը սխալ գործածած է «նշանագիր» իմաստով և կամ շփոթած է լեզուները և նշանագիրները: Եթէ արաբերէնը և թուրքերէնը տարբեր լեզուներ են, քոֆի (= քուֆի) ո՛չ թէ լեզու մըն է, այլ գրչութեան տեսակ մը⁽⁶⁾, զոր Դարանաղցի յաջողապէս թարգմանած է «արձանագիր», հաւանականաբար զայն յաճախ տեսած ըլլալով

(5) «Գրեալ» բառով կը բաժնեմ «արձանագիր»էն, մինչ տպագրին մէջ ունէ կէտ չկայ:

(6) Քուֆի բառը սերած է Միջագետքի Քուֆա քաղաքին անունէն: Քուֆա հիմնուած է Հիւրէթի 17 թուին (Ք. Վ. 638), և անկիւնաւոր գրչութիւնը, որ գոյութիւն ունէր արդէն 2. դարուն, առաջին անգամ այս քաղաքին մէջ պաշտօնապէս գործածուած ըլլալով, յորջորջուած է, քաղաքին անունով, քուֆի:

բայելի որդիներուն որոնց պաշտպան է ան,
Երկրորդ Օրինաց IV 20, IX 26:

4) Եթէ եզոմ ըսէ. կործանեցանք,
բայց պիտի վերականգնենք մեր աւերակ-
ները! — այսպէս խօսեցաւ բանակներու Ե-
հովան: Թող իրենք շինեն, ես պիտի քան-
դեմ! պիտի զիրենք մականուանեն «ամ-
բարշտութեան երկիր» և «ժողովուրդը ո-
րուն դէմ Եհովայ գայրացած է յաւիտեան:

Եզոմի փութումը վերջնական է և ճա-
կատագրական: Որովհետեւ անյողողող է ան
իր ապիրատութեան մէջ, **רשעה** գործեց
ան՝ անարդարութիւն, անիրաւութիւն: Ու-
շագրաւ է, այս հատուածին մէջ, Եհովայի
անուան կցուած **צבאות** մակդիրը, որուն
քսաներկու անգամ կը հանդիպինք, ամ-
բողջ գրութեան ընթացքին: Բանակներու՝
տառացի իր նշանակութիւնէն զատ, գերա-
զրական թելադրանքով մը Եհովայի ամե-
նակալութիւնը թէ՛ նիւթական և թէ՛ հոգե-
կան գոյութիւններու վրայ կը խորհրդանշէ:
כי թէական նշանակութեամբ, Երկ. Օր.
XIV 24, Առակք XXX 4, Նոյնպէս Աս.
Թարկ. Վուլ. Հայ. **תאמר** երրորդ դէմք
իգական եղակի քան թէ երկրորդ դէմք ե-
ղակի արական. այն նկատումով թէ, իգա-
կան են երկրի անունները Երեմ. XXXV 15,
XXXVI 5, Եզեկ. XXXII 29: Թէև, արա-
կան նկատուած է յաճախ Եզոմ. **אדם** —
կարմիր, կարմրորակ—ին անանցումն է:
רששו LXX κατέστραψται. Աս. և Թարկ.
ունին **רששו** աղքատացանք: **רששו**
Բօլալ ձևը **רש** որ կը նշանակէ աղքատ
ըլլալ, կարօտ ունենալ, կամ Kal-ի կրա-
ւորական ձևը առաջին դէմք յոգնակի **רש**
բային որ կը նշանակէ կործանել, հոմանիշ
է **רצץ** բային. Աս. **ר** բաշ ճգմել, խորտա-
կել, կործանել, փոխաբերական՝ փճանալ
իմաստով: **ך** կը պակսի Զօհր., Եթով. և
Վուլկաթայի մէջ, **נשוב** բայն առաջ **שוב**
բայը կը նշանակէ վերադառնալ, դառնալ,
ուղղուիլ, յաջորդող բայ մը կանխելու պա-
րագային, կը նշանակէ վերստին ընել, երկ-
րորդ բային կողմէ յայտնուած արարքը.
հատուածը կը գործածէ այս վերջին իմաս-
տով: Զօհր. **נבנה** վերջ կ'աւելցնէ զքա-
ղաքս, որ երրորդ հատուածին մէջ մեր
վարկածեալ ենթադրութիւնը կը հիմնաւորէ:
כה Արար. **כזה** ար. Harasu, քան-
դել, աւերել, Արար. **הרס** կտոր կտոր

ընել, պատռել, **בנה** հակառակն է որ կը
նշանակէ շինել, կառուցանել, բարձրա-
ցնել, տուն, տաճար, քաղաք, նոյնն է
Արար. **בנה** Ասոր. **בנה** Ար. banu. Թրքե-
րէն պիմա: **רשעה** և **רשעה** վերջը
ունին **רשעה** իր: **וקראו** երրորդ դէմք յոգ-
նակի, անորոշ գործածութեամբ, կրակորա-
կանօրէն կը թարգմանուի LXX **καταστραψται**.
גבול Ար. կը թարգմանէ **ἔπαυσις**՝ զժողո-
վուրդ, սեռական հօլով **רשעה** գոյականը
ածականի իմաստ ունի **רשעה** Արար. **רשעה**
ուղտի բերան փրփրիւ կը նշանակէ նաև
բարկութեամբ խօսիլ. փրփուրի և գայրոյթի
հանգիստութիւնը: Թարգմումը ունի **תהומה**
רשעה **דעמיה** սահմանը ամբարիշտ ժողո-
վուրդի մը:

5) Զեր աչքերը պիտի տեսնեն, և պիտի
ըսէք դուք: Մեծ է Եհովան Իսրայելի սահ-
մանին վերև:

Մեկնիչներու փաղանդ մը, հետեւեալ
կերպով կը մեկնէ այս հատուածը: Եհո-
վայի ուղղուած գոհաբանանքը չէ սահմա-
նափակ, հատուածական, կեդրոնացած լոկ
Իսրայելի վրայ, այլ համատարած, վեր է
ամէն տեսակ կաշկանդումներէ, և ազ-
գային խտրութիւններէ: Արդարեւ, միաս-
տուածութեան գաղափարի անօրինակ այս
ընդլայնումը դէպի օտար ափերը, զօգըն-
թաց չէ ժամանակի ոգին և տիրող հո-
գեբանութեան: Տարամբօթէն Իսրայելի
Աստուածն է Եհովան. երկրորդ առարկու-
թիւն, **ל** **מעל** անդին թարգմանութիւնն է,
որ ուրուագծած է վերև պարզուած ենթա-
գրեալ գաղափարներու շէնքը: Արդ, երե-
ւոյթապէս անդին կը թարգմանուի **ל** **מעל**,
Համեմատական զննութիւն մը կը յայտնա-
բերէ մեալ լը-ի հոմանիշութիւնը **על**-ին
հետ որ կը նշանակէ՝ վրայ, վերև, Արար.
על օրինակ՝ Նեե. XV 37, Իմն. I 7, Եզեկ. I
25, Յես. IV 6, Նեե. XV 39, նոյն համեմա-
տութեամբ, **ל** **מתחת** հաւասար է **תחת**-ին
ואתם շեշտաւորեալ է գերանունը. **ואתם**
יגדל LXX **ἐμεγαλύνθη**, Ասոր. **ܝܓܕܠ**, Վուլ. magnificetur,
Զօհր. բարձրացաւ, Ար. **عظم**, Թարկ. **יגדל**
ישראל **יתת** **ואפתי** **די** **ישראל**
նայ թող Տիրոջ փառքը, որովհետեւ ընդար-
ձակեց ան Իսրայելի սահմանները: **יגדל** ուղ-
ղել, գալարել, պրկել, Արար. **جدل** գարձը-
նել, չուան ոլորել, Ասոր. **ܝܓܕܠ** ոլորել,

պլուել, եթովպ. gadela ըմբշամարտիլ, մա-
քառիլ, ֆիզիքական ճիզի այս ըմբռնումը,
փոխադրուած է նաև հոգեկան բլանի վրայ,
ուրեմն կը նշանակէ, մեծնալ, փառաւոր-
ութիւլ, գոգութիւլ: מעל LXX ὑπεράνω, Զօհր.
ի վերայ, Ասոր. ܡܠܐ երրայերէն անդին
նշանակող բառերը հետեւեալներն են: מעלה,
בעבר, למעלה, מעלה

6) Զաւակ մը կը պատուէ իր հայրը:
Եւ ծառայ մը իր տիրոջմէն կը սարսափի.
Եթէ ես հայր եմ, ո՛ր. է արդ իմ մեծա-
րանքս, եթէ տէր եմ, ո՛ր. է արդ իմ եր-
կիւղը, ձեզ կ'ըսէ բանականութեան եհովան,
ձեզի, քահանաներուդ, անունն քամահոդ-
ները, բայց կ'ըսէք դուք, ինչո՞վ արհա-
մարհած ենք անունդ:

Անմական կենցաղաւարութեան պաշ-
տելի բարիքներէն մին կը կազմէ զաւկին
ակնածանքը իր հօր հանդէպ, Երկր. Օրի.
V 16, Ելից XX 12: Ծառային սարսափը
իւր տիրոջ նկատմամբ անհրաժեշտ է և բը-
նական Ելից XXI 20. Եհովայի հայրութեան
հանգամանքը, կը յիշատակուի նաև ալլուր
Ովս. XI 1, Ելից IV 12: Արատաւորուած
է Տիրոջ անունը, որովհետև պարտադանց
են քահանաները Երր. ԺՍ Ար. Բ. 1 եթով.

seme, Արամ. ܫܡ կամ ܫܡܐ Ա. ք. ք. sumu
անուն իմաստէն գատ, կը նշանակեն նաև
համբաւ, համարում, արժանապատուու-
թիւն, այս վերին գործածութիւնը ընդ-
գրկած է բնագիրը: ܐܒ յետոյ Ղպ. Զօհր.
Եթովպ. Ասոր. և Արար. ܐܒܬܐ իր կ'աւելի-
ցընեն: ܐܒܬܐ ծանրանալ. Եթով. kabēda
Ա. ք. ք. kabatu Յոր. VI 3, նաև, գովել,
փառաբանել, Եզեկ. XXVII 25: ܐܒܬܐ յետոյ
կ'աւելցնեն ܐܒܬܐ կամ ܐܒܬܐ ܐܒܬܐ GA, Զօհ.
Եթովպ. Թարկում. ܐܒܬܐ ܐܒܬܐ Արար.
ܐܒܬܐ Ա. ք. ք. ܐܒܬܐ ծառայ: ܐܒܬܐ փառաւորու-
թեան յոգնակի է, Ծնն. XXXIX 2, Երկր.
Օրինաց, X 17: ܐܒܬܐ Ա. ք. ք. ܐܒܬܐ քահն, Ար.

ܐܒܬܐ, Եթովպ. kahene, հայերէն քահանան,
որոշապէս սեմական ծագում ունի:

7) Կը մատուցանէք խորանիս վրայ
պիղծ ճաշեր. — բայց կ'ըսէք: Ինչո՞վ
պղծեցինք զայն. — ըսելով: Եհովայի սե-
ղանը անարդ է:

Արտաքին, ծիսական ձևակերպութեան
չէ ուղղուած մարգարէին զիտողութիւնը,

այլ ենթակային հոգեկան անփութութեան,
սնուցած անտարբերութեան սրբութեանց
նկատմամբ: Զօհր, իբրև ճաշ. ܐܒܬܐ, Ար.
ܐܒܬܐ, կը մասնակցէր նաև Աստուածու-
թիւնը. Եզեկ. XLIV 7: Զե. III 11, 16,
XXI 6, 8: Պէտք է շփոթել սեղանը յոնշ
այս հատուածին մէջ, առաջաւորութեան
սեղանին հետ Եզեկ. XXV 30. Թուոց IV
7: Այլ պարզապէս, խորան նշանակու-
թեամբ հոս գործածուած է, Եզեկ. XLI
22, XLIV 16: ܐܒܬܐ պէտք է փոխել
ܐܒܬܐ որովհետև LXX ὑλισγησμεν (Ակ.
Սի. Թէ. ἐμολύσμεν) αὐτοῦς. նոյնպէս Թար-
կում, Զօհր. Ղպ. Եթովպ. ܐܒܬܐ ܐܒܬܐ
կան codex-ը ὑλισγησμένη, սինէական codex-ը
ἐξουθενωμένη, նոյնպէս, Ղպ. Զօհր. ܐܒܬܐ
վերջ, վատիկանեան codex-ը կը շարունա-
կէ, καὶ τὰ ἐπιτιθέμενα ἐξουθενώσατε, նոյնպէս
լատի. Զօհր. Սինէական codex-ը ունի
βρώματα ἐξουθενωμένα, ուրիշ ընթերցուած
մը. καὶ τὰ ἐπιτιθέμενα βρώματα ἐξουθενώται
նոյնպէս Արար. Ղպ. Եթովպ.:

8) Երբ կը բերէք հոյսը (անասուն մը)
զոհելու, մի՞թէ գէշ է, և երբ կը բերէք
կաղ կամ հիւանդ (անասուն) մը, մի՞թէ
գէշ է: Ընծայէ զայն քու կառավարչիդ.
ատկէ գոհ պիտի մնայ արդեօք կամ քեզ
բարեկամութեամբ պիտի ընդունի, կ'ըսէ
բանականութեան եհովան:

Աւանդական օրինապահութեան հրամա-
յականներէն մին էր գոհի անարատութիւնը
Զե. XXII 20. Երկր. Օրի. XVII 1, XV 21,
Թուոց VI 14: Կարգ մը հեղինակներու հա-
մաձայն, ֆիզիքական տկարութիւնը կամ
տճեւութիւնը արդիւնքն էին դեւերու չա-
րամիտ գործունէութեան, այնպէս որ, ան
թապու էր և պիղծ՝ լոկ խորշանքի առար-
կայ. ܐܒܬܐ Ասուրերէն pabatu կամ bel-pabatu
որ կը նշանակէ «գաւառապետ»: Յուդայի
մէջ, Զորաբարել և Նեեմի թխայի պաշ-
տօն կը վարէին, Պարսիկ արքաներու իշ-
խանութեան ներքեւ, Անդ. I 1, 14. II 2,
21, Եզր. V 14, Երի տեղ Եթովպ. սանայ
լաւ ունի: ܐܒܬܐ կարգաւ ܐܒܬܐ նոյնպէս
sinaïtique Յունարէնը, ܐܒܬܐ բառա-
ցիւրէն՝ գէժքը վերցնել, բարձրացնել, կը
նշանակէ սիրով ընդունիլ:

ԱՆՈՒՇԱԻԱՆ ԱՐԴ. ԶԶԱՆԵԱՆ
(Շարունակելի)

ՊԱՏՄԱԿԱՆ

ԵՂԻՇԷ ՊԱՏՄԱԳԻՐ

ԵԻ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ուխտապահ բանակին պատրաստութիւնը լրացաւ «յաւուր ուրբաթու մեծի տօնին Պենտեկոստէին» (Փար. 69)։ Տոմարական հաշիւներով, 451 տարուան Մայիս 25ին կը հանգիպէր յիշեալ Ուրբաթ օրը, որուն յաջորդող Շաբաթ օրը, Հոգեգալըստեան տօնին նախատօնակին, Մայիս 26ին տեղի ունեցաւ Աւարայրի կարմիր ճակատամարտը։

Փարպեցիին բացատրութեամբ, պարսկական բանակը «անպատրաստագոյն» վիճակի մը մէջ կը գտնուէր, բայց Հայերն ալ անպատրաստ էին և իրենց ճակատը չէին կազմած։

Դիշերը Հայերը հսկումով և աղօթքով անցուցին։ Դեռնդ երէց Վանանդեցին, Յովսէփ կաթողիկոս Հոդոցմեցին (Փար. 71) և բոլոր միւս եկեղեցականները որոնք բանակին մէջ կը գտնուէին, բանակին և զինուորներուն ուղղեալ քաջալերական և խրատական քարոզներ խօսեցան, խանդավառելով և խրախուսելով ու զօրացնելով Հայ բանակին զինուորներն ու զօրականները։

Փարպեցին, նամանաւանդ եղիշէն, ընդարձակօրէն տեղ տուած են խօսուած քաջալերականներուն։ Քաջն Վարդան եւս իր կողմէն զինուորական ոճով քաջալերական մը խօսած էր իր հերոս բանակին։

«Ամենք միասին շատ մը պատերազմներ մղած ենք։ Եղած է որ մենք միասին քաջութեամբ թշնամիին յաղթած ենք, եղած է նաև որ մենք անոնցմէ յաղթուած ենք, սակայն ալ աւելի, մենք շատ անգամներ յաղթական եղած ենք և ոչ թէ յաղթուած։ Միանգամայն այս բոլորը մեր մարմին պարծանքը համարուած է, վասնզի՝ մենք անցաւոր թագաւորին հրամանով է որ կը մարտնչէինք։ Ով որ պատերազմէն կը փախչէր, վատանուն, վախկոտ և դասալիք կը

նկատուէր. իսկ ով որ քաջութեամբ առաջ կը նետուէր քաջ անունը կը ժառանգէր, երկրաւոր ու մահկանացու թագաւորէն մեծամեծ պարգևներ կ'ընդունէր։

«Եւ մենք, ամէնքս ալ ահաւասիկ մեր մարմին վրայ շատ վէրքեր և սպիւններ ունինք, և շատ քաջագործութիւններ կատարած ենք, որոնց համար մեծ պարգևներ ստացած ենք։ Այս բոլոր քաջագործութիւնները անարգ և անարժէք կը համարիմ, ոչինչի տեղ կը դնեմ շատ մը պարգևները, սրովհետեւ ամէնքն ալ պիտի կորսւնին։ Արդ, եթէ երբեք, մահկանացու հրամանատարին համար այս քաջագործութիւնները կը կատարէինք, ո՛րչափ աւելի շատ պէտք է կատարենք մեր միակ անմահ թագաւորին համար, որ Տէրն է ողջերուն և մեռելներուն, և ամէն-մարդ պիտի դատէ իր գործերուն համեմատ։ Արդարեւ, եթէ շատ երկար ապրինք մինչև մեր խոր ծերութիւն, նորէն այս մարմինէն պիտի բաժնւնինք, որպէսզի անմահ Աստուծոյ մօտը երթանք, ուրկէ այլևս պիտի չհեռանանք։

«Արդ, ո՛վ քաջ զինակիցներս, քանի որ դուք ձեր յօժար կամքովը զիս առաջնորդ և զօրազուլս ընտրեցիք, կը խնդրեմ որ իմ խօսքերս հաճելի թուին ձեզի բոլորիդ, մեծամեծներուդ և փոքրերուդ. նամանաւանդ որ՝ ձեզմէ շատերը ինձմէ աւելի բարձր են իրենց արիւթեամբը և հայրենի գահով։ Բնաւ մի՛ վախնաք հեթանոսներու բազմութենէն, և մահկանացուներու ահազին սուրբէն մի՛ փախչիք ու թիկունք դարձնէք. վասնզի՝ եթէ երբեք Տէրը յաղթութիւն պարգևէ մեզի, անոնց զօրութիւնը պիտի փշրենք, որպէսզի՝ ճշմարտութեան կողմը յաղթական ելլէ. իսկ եթէ երբեք մեր կեանքին վախճանը հասած է այս պատերազմին սուրբ մահուամբը, սրտի ուրախութեամբ ընդունինք զայն, սակայն մեր քաջութեան հետ վատութիւն և վախկոտութիւն չխառնենք։ Մանաւանդ ինձի համար անմոռանալի է, յիշելով իմ և ձեզմէ ոմանց քաջագործութիւնները, ժամանակին անօրէն իշխանը խաբեցինք, իբրեւ անպիտան մանուկ մը խելքէ հանեցինք, իբրեւ թէ՛ երեսանց անոր ամբարիշտ կամքը կատարեցինք. սակայն և այնպէս Տէրը ինքնին վկայ է մեզի թէ՛ ինչպէ՛ս անքակտելի մնացած ենք անկէ։ Դուք բոլորդ այդ բա-

ները գիտէք արդէն, մեր սիրելիներուն համար, որոնք մեծ նեղութեան մէջ կը գտնուէին, հնարք կը փնտռէինք անդորրութեան մէջ ելլելու, որպէսզի՝ անոնցմով պատերազմ ընելով կուտինք, մեր հայրենական աստուածատուր կրօնքին համար։ Եւ երբ անոնց ոչ մէկ բանով կրցանք օգնել, անհնար պիտի ըլլայ, եթէ մարմնաւոր սիրոյ համար Աստուածը մարդոց հետ փոխանակեմք։ Քանի մը պատերազմներու մէջ Տէրը մեզի մեծ զօրութեամբ օգնեց, որով՝ քաջութեան անունը ժառանգեցինք և արքունի զօրքերը չարաչար հարուածեցինք, մոգերը անողորմ կերպով սատկեցուցինք, և կռապաշտութեան պղծութիւնը շատ մը տեղերէ սրբեցինք, թագաւորին անօրէն հրամանը կտրեցինք և անոր ծովացեալ կատաղութիւնը իջեցուցինք, լեռնացած ալիքները դաշտացան, բարձրագէղ փրփուրները կորսուեցան, գազանացած բարկութիւնը իջաւ։ Ան որ ամպերու վրայ կ'որոտար, իր սովորական բնութենէն դէպի աւելի վար խոնարհեցաւ, մեզի հետ խօսելով։ Ան որ իր խօսքի հրամանովը, կ'ուզէր իր չարութիւնը Ս. Եկեղեցիին վրայ կատարել, այժմ՝ աղեղով, նիզակով և սուրով կը կուտի։ Ան՝ որ կը կարծէր թէ, մենք Քրիստոնէութիւնը իբրեւ հագուստ միայն հագած ենք, հիմա, մեր մարմնի գոյնին պէս, մեր վրայէն չի կրնար փոխել, թե՛րեւս՝ բնաւ իսկ չկարենայ, մինչև աշխարհի վերջը։ Վասնզի՝ անոր հիմերը դրուած են անշարժութեան վէմին վրայ, ո՛չ թէ երկրի վրայ, այլ՝ երկնքին մէջ, ուր՝ ո՛չ անձրևները կը տեղան, ո՛չ հովը կը փչէ և ո՛չ ալ հեղեղները առաջ կուգան։ Ու մենք, թէև մարմնով երկրի վրայ կը գտնուինք, սակայն՝ հաւատքով երկնքի մէջ շինուած ենք, ուր՝ ոչ ոք կրնայ հասնիլ Քրիստոսի անձեռագործ շէնքին։

«Հաստատուն կացէք մեր անսուտ զօրագլուխին վրայ, որ երբեք պիտի չմոռնայ մեր քաջութեան գործերը։ Ով քաջ զինակիցներս, ասիկա մեզի մեծ փառք է, զոր Աստուած կատարեց մեր միջոցաւ, որուն մէջ Աստուծոյ զօրութիւնը մեծապէս կը յայտնուի։ Վասնզի՝ եթէ երբեք աստուածային օրէնքներուն համար, ուրիշները կոտորելով, պարծանք ժառանգեցինք և մեր ազգատոհմին քաջ անունը եկեղե-

ցիին թողուցինք, վասնզի՝ վարձատրութեան ակնկալութիւնը Տիրոջմէն է, որ կը պահուի մեր մէջ սրտին յօժարութեան և գործոց նպատակին յաջողութեան համաձայն, որչա՞փ աւելի մեծ է, եթէ մենք Տիրոջը Յիսուս Քրիստոսի մեծ վկայութեանը համար մեռնինք, որուն երկնաւորներն ալ կը ցանկան, եթէ երբեք հնարաւոր ըլլար։ Եւ այս պարգևը ամէնուն չի տրուիր, այլ՝ անո՞ր միայն, որուն համար բարերար Տիրոջ կողմէն կը պատրաստուի, և մեզի՝ ասոնք կը տրուին ոչ թէ՛ մեր արդար գործերուն ի վարձատրութիւն, այլ՝ անհախաճ պարգևատուէն իբրեւ շնորհք, ինչպէս որ կ'ըսուի Ս. Կտակարանին մէջ «Ուր որ մեղքը աւելի եղած էր, հոն Աստուծոյ շնորհքները աւելի առատացան»։ Եւ մեզի շատ լաւ կը յարմարի այս պատասխանը, ինչպէս որ մենք մարդոց աչքին շատ ամբարիշտ երևցանք, կրկնապէս արդարացած պիտի երևինք մարդոց, հրեշտակներուն և Հօր Աստուծոյ։ Վասնզի՝ այն օրը որ մարդիկ լսեցին մեր ամբարշտութիւնը (= Ուրացողութեան գործը), շատ արցունք թափեցին Ս. Եկեղեցիին մէջ, ու շատ աւելի մեր սիրելիներու շրջանակին մէջ։ Նոյնիսկ մեր ընկերները զայրացած, սուրով կը սպառնային մեզի, և մեր ծառաներն իսկ մեզմէ կը փախչէին։ Եւ հեռաւորները, որոնք լսած էին թէ քրիստոնեայ էինք և ուրացած, որովհետեւ անոնք տեղեակ չէին մեր խորհուրդներուն, կ'ողբային և կ'ուշային մեր վրայ, և անգիտութեամբ շատ հայոյութիւններ կ'ընէին մեր վրայ։ Եւ ինչ որ մեծագոյնն է, ո՛չ միայն մարդիկ երկրի վրայ, այլ՝ նաև հրեշտակները երկնքին մէջ, իրենց երեսը մեզմէ կը դարձնէին, որպէսզի անոնք տխուր դէմքով չի նային մեզի։

«Եւ ահա՛, այժմ՝ եկաւ ու հասաւ ժամանակը, որպէսզի՝ ամէն վատ (զկեղտ) անունը մեր վրայէն վերցնենք։ Այն ատեն, մենք տխուր տրտում, սգաւորի մը նման, հոգիով և մարմնով տխրած էինք, իսկ՝ այսօր, զուարթ ու զգաստ, երկուքով ալ ուրախ ենք և խելքերնիս գլուխ եկած է, վասնզի՝ բարերար Տէրը մեզի հետ կը տեսնենք իբրեւ մեզի առաջնորդ։ Մեր զօրավարը մարդ չէ, այլ՝ մարտիրոսներու զօրագլուխը (Քրիստոս)։ Երկիւղը թերահա-

ւատութեան նշան է. իսկ Թերահաւատութիւնը Մենք Մեզմէ Շատոնց Մերժեցինք: Անոր Հետ Վախը Թող Փախչի Մեր Միտքէն Ու Մեր Խորհուրդներէն» (Ե. Յեղանակ):

Բանակը հոգեւորապէս զօրացնելու համար, պատարագներ, հոգեւոր պաշտամունքներ կատարուեցան. «Աւ հաղորդեալ զօրացն Հայոց ի պատուական խորհրդոյն մարմնոյ և արեան՝ ի գործ առաջիկայ երկնաւոր իրացն փութային» (Փար. 71). իսկ երախայ եղողներն ալ ի գիշերի մկրտուեցան «զգիշերն ամենայն մկրտեցին» (Ե. Յեղ. էջ 216):

Մայիս 26, շաբաթ օրը կը լուսնար «մերձեալ էր այնուհետեւ ժամ ելից արեգական», երբ Հայերը տեսան թէ՝ Պարսիկ բանակը շարժման վրայ էր: Այս հետազօտութենէն վերջը, Քաջն Վարդան իր բանակը պատրաստեց և կարգի դրաւ: Անշուշտ նախապէս այս մասին նախապատրաստական աշխատանքներ և որոշումներ տրուած էին Հայոց զօրավարներէն և Քաջն Վարդանի կողմէն: Փարպեցիին և Նիկիշին տուած բանակին բաժանումները քիչ մը իրարմէ կը տարբերին: Հայոց բանակը երեք գլխաւոր մասերու բաժնուեցաւ, չորրորդ վերջապահով մը: Աջակողմեան կամ ըսենք Առաջին Բանակին հրամանատար նշանակուեցաւ Խորէն Խորխոռունի զօրավարը, իրեն զֆնականներ ունենալով Թաթուլ Դիմաքսեան և Ներսէս Քաջբերունի զօրավարները, Ձախակողմեան կամ Երկրորդ Բանակին հրամանատարն էր Նոյնինքն՝ Քաջն Վարդանը իրեն զֆնական ունենալով փափագ Առաւելեան զօրավարը, Միջին կամ Երրորդ Բանակին հրամանատարն էր Ներշապուհ Արծրունի զօրավարը, իրեն զֆնականներ ունենալով Միհրշապուհ Մարգարեան, Արշաւիր Արշարունի և Արտակ Մոկացի զօրավարները: Վերջապահ բանակին հրամանատարն էր Քաջն Վարդանի եղբայրը, Համազասպ Մամիկոնեան զօրավարը, որուն՝ Քաջն Վարդան խիստ հրաման տուաւ «մի գոք բռնադատել» այսինքն՝ կեանքի սպառնալիքով ճակատամարտէն փախչողները չարգիլել առ յորդորել միայն բանիւք յաղագս իւրեանց փրկութեան» (Փար. 72): Ինչպէս վերը յիշեցինք, Ձախակողմեան կամ Երկրորդ Բանակին հրամանատարն էր Քաջն Վարդան՝ Հայոց կո-

րովի և առիւծասիրտ մեծ սպարապետը մասնաւոր կերպով իրեն համար պահած էր «քանզի յայն կողմանէ առաւելաբար երեւէր զակիշ գնդին Սիւնի զօրուն և այլ զօրաւոր արանց» (Փար. 72), որով կը տեսնուի թէ՝ Վասակ Սիւնիին և իրեն համակիրներու հայազունը հոն հաւաքուած էին...

Իսկ Պարսիկ բանակին ընդհանուր հրամանատար, Մուշկան Նիւսաւաւուրտ զօրավարը, իր բանակին կարեւոր ուժը, իր աջակողմը հաւաքած էր Հայոց Ձախակողմեան կամ Երկրորդ Բանակին դէմ ճակատամարտելու համար: Հայոց բանակը ամէն կողմէն փակելու և պաշարելու կանխահոգութեամբ, մեծ թիւով փիղեր բանակին ետեւ շարած էր, իսկ Մուշկան Նիւսաւաւուրտ Մատեան Գունդին մէջ կը մնար: Հայոց բանակին թիւը յիշեցինք, 66,000 էր, թէ հեծեալ և թէ հետեակ, իսկ պարսկական բանակը 200,000-250,000 ենթադրուած է: Կոռուող բանակներուն թիւերը անհաւասար էին 1 ի դէմ 3:

Պատերազմի նշանը տրուելուն պէս, երկու բանակներն ալ կատաղութեամբ և խիզախութեամբ իրարու վրայ յարձակեցան: Հայերը Քաջն Վարդանի ձայնէն խրախուսուած՝ Տղմուտ գետը անցան, և սկսան ջարդել Պարսիկները: Երբ Հայերը Տղմուտ գետէն անդին անցան պարսիկները շփոթութեան մատնուեցան, Քաջն Վարդան թշնամիին աջ թեւը ետ մղեց, պահ մը պարսկական բանակին մէջ շփոթութիւն մը ծայր տուաւ, պարսիկները կը փախչէին...

Այդ միջոցին Հայոց զօրքին մէկ մասը ընկրկեցաւ և ետ քաշուեցաւ: Մուշկան Նիւսաւաւուրտ զօրավարը երբ տեսաւ Հայոց ընկրկումը քաջալերեց իր բանակը և Վարդանը պաշարեց իր ընկերներով:

Ինչպէս Հայոց զիւցազն զօրավարը և իրեն հետ ինկան հզօր զօրավարներ և զինուորներ... Քաջն Վարդան Մամիկոնեան, Հայոց զիւցազն ու առիւծասիրտ զօրավարը, որ 42 պատերազմներու մէջ յաղթական ելած էր և 20 տարիներ ծառայած էր Պարսից բանակին մէջ, 43րդ պատերազմին մէջ ինկաւ, այսպէս կատարեց իր այն խօսքը երբ Յազկերտին ըսաւ «Այնպիսի գործ մը պիտի գործեմ որ բոլոր աշխարհ պիտի պատմուի մինչև յաւիտեան»:

Պատերազմի գաւտին վրայ Հայոց կող-

մէն 287 մարդ և 9 զօրավար, իսկ պարսից կողմէն 3544 մարդ և 9 զօրավար ինկած ըլլալը ցոյց կուտան թէ՛ ինչպիսի թափով և ուժգնութեամբ Հայերը յարձակած էին Պարսիկներու վրայ, որով անոնց բանակը և զինուորները ու զինուորական ուժը չըփոթութեան և բնկրկումի մատնուած էին:

Պատերազմը օրն ի բուն շարունակուեցաւ և Հայոց բանակը ցրուեցաւ ասդին անդին:

Աւարայրի զիւցազնամարտին մէջ Հայերը 1036 նահատակներ ունեցան, որոնց մէջ 9 զօրավարներ, որոնք յականէ յանուանէ յիշուած են պատմութեան մէջ: Եւ զիչէ մանրամասնօրէն պատերազմի դաշտին վրայ նահատակուողներուն թիւը կուտայ, իւրաքանչիւր զօրավարին անունովը ըստ հետեւեալին. —

- | | | |
|-----------------------|---|---------------|
| 1. Վարդան Մամիկոնեան | և | 133 իրենցներէ |
| 2. Խորէն Խորխոռուցի | > | 19 > |
| 3. Արսակ Պալուցի | > | 57 > |
| 4. Տանաս Դերուցի | > | 19 > |
| 5. Հմայեակ Դիմաֆեան | > | 22 > |
| 6. Ներսէն Քաջբեռուցի | > | 7 > |
| 7. Վահան Կնուցի | > | 3 > |
| 8. Արսէն Բնծայնցի | > | 7 > |
| 9. Գարեգին Մուսանձեան | > | 20 > |

համագումար 9 զօրավար և 287 զինուոր:

Փարպեցին ալ 9 զօրավարներ կը յիշէ, իսկ նահատակներուն թիւը 276 կը գնէ որ կ'ընէ 285 փոխանակ 296ի:

Սակայն այսչափ չի մնացին նահատակուողները, վասնզի՝ Հայերը ստիպուեցան ցրուիլ և փախչիլ և Պարսիկները անոնց ետեւէն հասնելով կամ թաքստոցներէն հանելով սրակոտոր կամ փիղերով կոխկրտեցին, 740 զինուոր ըստ Եղիշէի կամ 750 զինուոր ըստ Փարպեցիի, որով՝ Վարդանանց նահատակաց համագումարը կ'ըլլայ 1035 կամ 1036: Սակայն 1036 թիւը նըւերագործուած և տօնացոյցներու մէջ ալ անցած է «և զորս յամրոցացն իշուցեալ ըսպանին սրով և կամ փղօք կոխեցին՝ եօթն հարիւր և յիսուն այր» (Փար. 73): Պատերազմը որ արշալոյսին սկսած էր «մերձեալ էր այնուհետեւ ժամ ելից արեգականն», շարունակուեցաւ «մինչև ի մուտս արեգականն անդադար լինէր գործ դառնութեանն» (Զ. Յեզ.):

Ծաղկալից դաշտերը արիւնով ներկը-

ւած էին «և քանզի զարնանային էր ժամանակն, ծաղկալից դաշտքն դառնային յորդահոսան արեանց բազմաց» (Զ. Յեզ.):

Եղիշէն կը հաւատտէ թէ քաջեր քաջերու դէմ պատերազմի ելան և երկու կողմերն ալ պարտուեցան «Քանզի Ոչ Եթէ կողմ էր՝ Որ Յաղթեաց, Եւ կողմ էր՝ Որ Պարտեաց, Այլ Քաջք Ընդ Քաջս Ելեալ Երկօքին կողմանքն ՚ի Պարտութիւն Մատնեցան» (Ե. Յեզ.): Պէտք է ընդունիլ թէ, Հայերը պատերազմը կորսնցուցին և պարտուեցան՝ հակառակ իրենց ցոյց տուած անչափելի, աննկարագրելի ու անկշռելի հերոսութեանց և սխրագործութեանց և թշնամի բանակին պատճառած բազմապատիկ կորուստին: Սակայն և այնպէս Վարդանի շահեցան պատերազմին նպատակը և ասիկա շնորհիւ Քաջն Վարդանի նահատակութեան:

Հայոց հետապնդած կրօնքի, խղճի և հայրենիքի նպատակը ազատութեան և արգրութեան հիմամբ, Քաջն Վարդան Մամիկոնեանի եղբորորդի Վահան Մամիկոնեանի կողմէն 484ին իրագործուեցաւ նըւարսակի դաշինքով, Պարսից Վաղարշ թագաւորը, որ գոռողամիտ և ամբարտաւան Պերոզ թագաւորին յաջորդեց, ճանչցաւ Հայաստանի ինքնօրէնութիւնը և ազատութիւնը (կրօնքի, խղճի և հայրենեաց) և Վահան Մամիկոնեանը իբրեւ հանճարեղ հերոս և խելացի անձ մը ո՛չ միայն Հայոց Սպարապետ այլ նաև Պարսից կողմէն մարզպան նշանակեց:

Ազգային հաւատքին և Աւետարանի հաւատքին պաշտպանութեան նահատակներն եղան Վարդանանք:

Հայ Ժողովուրդը կ'ուզէր խղճի անբռնաբարեւութեան իրաւունք, կրօնքի ազատութիւն և հայրենիքի պաշտպանութիւն և այս բոլորին մէջ Հայ Ժողովուրդը գիտացաւ իր ուժը և զիտակցութիւնը պահել...

ՊԱՐԳԵԻ ՎՐԴ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ

(Նարեկեանի՝ 9)



ՊԵՏՐԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ

ՇԵԼԼԵՆ ԵՒ ԵՐԱՅԱԿԱՆ

ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Դանիէլ Մարգարէի Գիրքը, կը ներկայացնէ այսպիսի պատմութեան փիլիսոփայութիւն մը: Այս Գիրքին մէջ մենք կը տեսնենք թէ մարդկութիւնը պրօցէսի մը մէջ է և կը միտի դէպի որոշ նպատակ մը: Դանիէլի մեկնութիւնը Նաբուգոդոնոսորի երազին, կը ներկայացնէ առաջին փորձը մարդկային պատմութեան մէջ, «պատմութեան» ծրագիր մը մշակելու. — փորձ մը որ աւելի վերջը պիտի կրկնուէր և պիտի զարգանար Քրիստոնէական փիլիսոփայութեան մէջ: Երեմիա Մարգարէի, պատմութեան մասին ունեցած տեսակէտը գունաւորուած է իր այն հաւատքովը թէ Աստուած պատժեց իր ժողովուրդը: Ան կը սիրէր զՆաբուգոդոնոսոր իբրեւ «Աստուծոյ Զեռքին մէջ խարազան»: Հրեայ հասկացողութեան մարգարէական այս նկարագիրը հետագային կազմաւորեց պատմութեան փիլիսոփայութիւնը: Հելլեն աշխարհը բաւականացած էր դաշնաւոր Տիեզերքի մը հայեցողութեամբ. բայց այս մէկը ծանօթ էր Հրեաներուն որոնց բաժին էր ինկած յայտնաբերելու մարդկային ճակատագրականութեան պատմական տրաման. — Տրամ մը որ մեծ դէպք մը պիտի արձանագրէր Հրեայ, ինչպէս նաև հանուր մարդկութեան ճակատագրին վրայ: Ատիկա Մեսիական Գաղափարն էր, մեկին՝ Հրեայ ժողովուրդին:

Պիտի ուզէի այս տեսակէտը ապացուցող քանի մը բաղդատութիւններ մէջըրել: Ի՞նչպէս եղաւ որ Յոյները, որոնք վերբերին մարդկային Ոգին մեծ յայտնութիւնները, կարող չեղան յղանալու պատմութեան գաղափարը: Պարզապէս որովհետեւ Հելլեն աշխարհը ազատութեան հասկացողութիւնը չունէր: Ոչ Յոյն կրօնքը և ոչ ալ Յոյն փիլիսոփայութիւնը ի յայտ բերաւ լման Ազատութեան sense-ը: Ճակատագրին ենթարկումը Հելլեն ոգին մամնէն caractéristique երևոյթն է: Ատիկա

անոր համար որ՝ Յոյները միշտ ալ, աւելի Զեռն է որ նշանակութիւն կուտային քան թէ Խորքին: Արուեստի, փիլիսոփայութեան, ինչպէս նաև Հելլեն կեանքի ամէն մարդի մէջ ձևական կատարելութեան օրէնքները գերիշխող էին նիւթի և պարունակութեան վրայ, ներփակելով ոչ-բանական մօթիֆը մարդկային կեանքին:

Արդ՝ այս ոչ բանական սկզբունքը ազատութեան հետ նոյնիմաստ է գրեթէ, ինչպէս որ յետոյ Ֆորմիւլի վերածուեցաւ Քրիստոնէութեան կողմէ: Քրիստոնեայ աշխարհը Խորքին աւելի նշանակութիւն ընծայեց քան թէ Զեռն: Քրիստոնէութիւնն էր որ մարդկային ազատութեան ոչ-բանական սկզբունքը, ինչպէս նաև ստեղծագործ անհատը երեան բերաւ, առանց որուն պատմութեան պրօցէսը անկարելի է: Մինչ Հըրեայ հասկացողութիւնը, պատմական պրօցէսը կ'ապահովէր մարդկութեան, միւսը, բարին և չարին զիտութիւնը կը բերէր: Որովհետեւ, պատմութիւն գոյութիւն չի կրնար ունենալ առանց չարին ազատութեան որ իր սկիզբը ունի մարդկային ծնունդէն: Առանց այս պայմաններուն աշխարհ մը պիտի անսկիզբ ըլլար, կատարելին ձգտող, Աստուծոյ անթերի թագաւորութիւնը, կատարելալ Տիեզերք մը Բարին և Գեղեցիկին Զեռն մէջ: Բայց աշխարհի պատմութիւնը իր ծնունդը չըրաւ այսպիսի կատարելութեան մը մէջ: Այս է «Պատմական Պրօցէս» յղացքին ետեւ եղող գաղափարը: Գաղափար մը, որ էր կրնար յառաջ եկած ըլլալ Հելլեն հասկացողութեանէն, որ առաւելաբար Տիեզերական կատարելութեան ձգտող մըն էր:

Արիական հասկացողութիւնը, աւելի Հնդկական մշակոյթին կը մօտենայ քան թէ Հելլենականին: Կարելի է ըսել որ Հնդկական ճակատագրականութիւնը և հասկացողութիւնը ամենէն աւելի ոչ-պատմականներն են: Իրենց ամէնէն խորունկ էլէմանները չեն մերձեցուած պատմութեան: Անոնք պատմութեան մասին գաղափար չունէին: Իրենց ոգեկան կեանքը կը թուէր ըլլալ անհատական բան մը, անհատական ոգեկան ճակատագրականութիւն մը, որուն խորքին մէջ Աստուածութիւնը կը յայտնակերպուի մասնաւոր ձևով մը որ կ'անդրանցնի պատմական ճակատագրականութիւնը:

Հնդկի ոգին պատմականն ու բնագանցականը կը գէժանդիմանէ։ Այս երկուքը միութեան մը բերելու իրենց անկարողութիւնը, առաջնորդեց զիրենք, պատմութիւնը յղանալու իրրե երևոյթներու պարզ, արտաքին շարայարութիւն մը, զուրկ՝ ներքին իմաստէ, նշանակութենէ։ Հոս ուրեմն կը տեսնենք թէ պատմութիւնը նոյնիմաստ կ'ըլլայ, արտաքին փորձառական աշխարհին հետ, իրականութեան հիմնական կարգ մը, զորս կարեւոր է տիրանալ որպէսզի հաղորդակցինք բնագանցական էոյթին հետ աւելի բարձր աշխարհի մը, որ Ազիին դրոշմը կը կրէ։

Այսպէս է ուրեմն Արիական Մօնիզմը, զորս մենք սովորաբար կը գտնենք ընդդէմ Հրեայ և Քրիստոնեայ հասկացողութեանց երկուութեան։

Առաջին անգամ Հրեայ ժողովուրդը պատմութիւնը իմաստասիրելու փափաքը ունեցաւ։ Բայց Քրիստոնեայ աշխարհին վերապահուած էր փառքը հաստատելու համար իրաւ պատմութեան փրկիստփայլութիւն մը, իրրե մասնաւոր ոգեկանութիւն և աշխարհահայեացք (weltanschauung)։ Քրիստոնէութիւնը Հիլլենականն ու Եբրայականը միախառնեց և տիրացաւ պատմականի մասնաւոր ներհայեցողութեան մը (intuition) որը սուրացուած էր զասական և նոյնիսկ Հրեայ մշակոյթներուն։

Պատմութիւնը և իր յղացքը կարելի են միայն երբ աշխարհի պրօցէսը կ'ըմբռնուի իրրե քաոսային բան մը։ Պատմութեան քաոսային (catastrophique) մեկնութիւնը կ'առաջադրէ կեդրոնական իրականութիւն մը. — Աստուածային յայտնութիւնը, որուն միջոցաւ ներքինը կ'արտաքինանայ, և ոգին կը մարմնաւորուի։ Այսպիսի հասկացողութիւն մը ծանօթ էր Յոյներուն և նոյնիսկ խորապէս ոգեպաշտ Հնդկիններուն, որոնք նախազգացումը չունեցան պատմութեան մէջ մեծ և կեդրոնական դէպքի մը։ Քրիստոնէութեամբ, ազատութեան յղացքը եկաւ մարդոց, զորս անտեսուած էր Հիլլին աշխարհէն բայց որ անհրաժեշտ էր կառուցանելու պատմութիւնը և իր փրկիստփայլութիւնը։ Անկարելի է պատմութիւնը իմանալ, առանց ազատութեան այսպիսի հասկացողութեան մը, որ կը կեդրոնացնէ պատմութեան վրայ իր

տրամադրիկ և եղերական նկարագիրը. — եղերականութիւնը չարին և մթութեան, Յաւիտենականն ու ժամանակաւորը կը համագոյակցին Քրիստոնէական հասկացողութեան մէջ փոխադարձ մասնակցութեամբ, մինչ Յոյները ժամանակի ընթացքը իրրե շրջանակ զիտէին։ Քրիստոնէութիւնը անցաւ շրջանակային գաղափարէն, գտաւ պատմական նպատակ մը։ Անիկա ներմուծեց Տինամիզմի գաղափարը և ազատագրող սկզբունքը որ արձակեց փոթորկայոյզ և ընդլղող պատմութիւնը Արեւմտեան Ժողովուրդներուն։

Պատմութիւնը երկու մեծ էլէմաններ կ'առնէ, — ստեղծագործողն ու պահպանողականը։ Պատմական պրօցէսը կարելի չըլլար առանց այս միաւորման։

«Պահպանողական էլէման» յղացքով ըսել կ'ուզուի, ոգեկան անցեալին հետ հաղորդակցութիւն մը, ներքին աւանդութիւն մը, և անցեալի ժառանգութենէն ընկալչութիւն մը։ Բայց պատմութիւնը անփիճելիօրէն կը պահանջէ Տինամիք-ըմ-տեղծագործ էլէման մը և ինքնակատարելագործման նպատակ մը։ Այսպէսով ըստեղծագործ սկզբունքը կը համագոյակցի ներքին կապի մը հետ և խորապէս կը հաղորդուի անցեալով։ Այս երկուքէն որեւէ մէկուն պակասը չի վաւերականացնէր պատմութեան առաջադրութիւնը։

Զուտ և վերացական պահպանողականութիւնը հակապատմական է, քանի որ անիկա արդէն իսկ իրագործուածը կը պահպանէ։ Այսպիսի իմացք մը պատմութիւնը անկարելի կ'ընէ։ Միւս կողմէ անցեալի հետ կապ մը պահել, կը նշանակէ ստեղծագործ Տինամիզմ ունենալ, անցեալէն եկող կտակներուն հաւատարիմ ըլլալ, և մեր պապերուն ստեղծագործ և Տինամիք կեանքին հաղորդ ըլլալ։ Կապ մը հետեւաբար մեր նախնեաց հետ, մեր հայրենիքին հետ, և վերջապէս այն բոլորին հետ որոնք նուիրականացած են, ստեղծագործ և Տինամիք պրօցէս մըն է, որ կը նայի դէպի ապագան, կատարելութեան տանելով նոր կեանք մը նոր աշխարհի մը մէջ։ Այս պրօցէսը կը պատահի յաւիտենութեան մէջ. և միացումը՝ յաւիտենական կեանքին մէջ կը կատարելագործէ ինքզինք, տեսակ մը մը, պատմական, ստեղծագործ, և վեր-

ջապէս Տինամիք շարժամար։ Այսպիսի յղացք մը կը միաւորէ ժամանակաւորն ու յաւիտենականը, պատմականն ու բնագանցականը, այն որ ներկայ է պատմութեան ֆիզիք իրականութիւններուն մէջ, և այն որ վերջապէս կը յայտնակերպուի ոգեկան իրականութեան ամենախորունկին մէջ, ու կ'օգնէ զօգելու երկրային ու երկնային պատմութիւնները։

Բայց, ինչ կը նշանակէ «երկնային Պատմութիւն» յղացքը։ Ոգեկան կեանքի ներքին ծալքերուն մէջ, կը բնակի նախաճակատագրականութիւնը, որ կը յայտնակերպէ ինքզինք երկրային կեանքին մէջ։ Երկնային այս նախերգանքը նմանիմաստ է Goethe-ի Faust-ին։ Faust-ի ճակատագիրը Մարգուն ճակատագիրն է, ու այս երկնային նախերգանքը կը կանխորոշէ մարդկութեան երկրային ճակատագիրը։ Պատմութեան փիլիսոփայութիւնը պարտի, պատմութեան բնագանցականը ըլլալ։ Վասնզի անիկա իր ծնունդը ունի այն երկնային նախերգանքին մէջ զորս կը կանխորոշէ պատմական ճակատագրականութիւնները ներքին ոգեկան պատմութեան յայտնակերպման մէջ, որովհետեւ երկինքը մեր ներքին ոգեկան երկինքն է։ Հոս է որ կը գտնենք այն իրաւ կապը պատմականին և բնագանցականին միջև ուր ես կը տեսնեմ է՛ն խորունկ նշանակութիւնը իւրաքանչիւր Բրիտանացի պատմութեան փիլիսոփայութեան։ Անիկա կ'անդրանցնի հերձուհիներու և զաղափարաց զուգահեռականութիւններուն, ապահովելով առաւելագոյն միացում մը, մէկը միւսին մէջ հեղուով, խորհրդաւոր ալիակերպում մը կը յառաջացնէ, երկնայինն և երկրայինն, բնագանցականն և պատմականին միջև, արտաքնացնելով ներքինը։

ՆԻՔՈԼԱ ՊԵՐՏԻԱԷՎ

Թրգմ.

ԶԱԻՆ ԱՖԶ. ՉԻՆՉԻՆԱՆ

(Վերջ)



ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ

ԵՐԵՔ ՍԻՒՆԵՐԸ

Ուրեմն, ծայր աստիճան դժուար է հետեւիլ իմացականութեան։ Աւելին. տեղին է ան միշտ և ամենուրեք, և վերջապէս, սեպհական կարծուած իր կալուածին մէջ, անոր օգտագործումը ամբողջապէս հաճոյքէ զերծ է։ Որովհետեւ այն որ միշտ կը դատէ, երբեք չվայելի և քննադատութիւնը կը դառնայ, իր ձեռքերուն մէջ, բռնազրօսիկ և կարծր բան մը, փոխանակ ըլլալու «պարզապէս արուեստը վայելելու» զիրքերը, և հարստացնելու ու նրբացնելու անոնցմով իր զգայութիւնները։ Պիւնըթիէրի քըննադատութիւնը «զաղափարաբանութիւն մըն է միայն», և ան «կ'արտաքսէ զրեթէ ամբողջովին հեշտանքը որ կը ծնի շփումէն լման, պարզ և իրր լքեալ, արուեստի երկին հետ ... դժուար հրաժարում երեւութական ...»։

Աֆրանս, իր կարգին, կը պահանջէ, ի նպաստ հեշտասէր և քմայքոտ քննադատութեան, որ չի յաւակնիր իմացականութիւն դնել ամէն տեղ, առանց այդ պատճառաւ դադրելու հաճելի ըլլալէ, և ընդհակառակը։ Եւ կ'ուզէ իր սարսափելի հակառակորդին սա աղաչանքը՝ հեղեղական ու դաւաճան՝ «բայց չի՞ կրնար ներել անմեղ մտքի մը խառնուիլ արուեստի բաներուն, նուազ խստութեամբ և շարունակականութեամբ (բաներ որ ինքն ալ չունի), և կիւրարկել նուազ իմացականութիւն, մանաւանդ նուազ տրամաբանութիւն։ չի՞ կրնար ներել պահելու՝ քննադատութեան մէջ, զրոյցի ընտանեկան թոնը և պտոյտի թեթեւ քայլը, կենալու՝ ուր հաճելի է, և ընել երբեմն խոստովանութիւններ, հետեւիլ իր ճաշակին, իր քմայքներուն և նոյնիսկ քմահաճոյքին, ըլլալու պայմանաւ միշտ իրաւ, անկեղծ և բարեացակամ, չզիտնալու և չբացատրելու ամէն բան. հաւատալու՝ անդամամեղի զանազանութեան զաղափարներու և զգացումներու, և խօսելու հաճոյքով սիրելի բաներէ»։

Այս ամէնը՝ ըսելու համար որ քննադատութիւնը չի կրնար առարկայական ըլլալ: Քանի որ իմացականութիւնը չի կրնար տալ անոր հաստատ կոռուան մը իր դատումներուն և դասաւորումներուն, քանի որ զիտական ձգտումը՝ խարկանք, դրութեանական ոգին՝ փնտրակար, և աւանդութիւնը խաբող է, որոշապէս պէտք է հրաժարի ինքն իրմէն դուրս գալու փոռասիրութենէն, որ զուրկ է գեղեցկութենէ, բայց զուրկ՝ իմաստէ: Տպաւորապաշտներու բոլոր դանգաւորները dogmatique քննադատութեան դէմ կը յանգին այս եզրակացութեան: Հոգ է վէճին հանդոյցը: Եւ Տպաւորապաշտները կ'արտադրեն նոր պատճառաբանութիւններ յեռակելու այն հաստատումը թէ մարդ անկարող է ինքն իրմէն դուրս ելլել:

Եթէ Քննադատները կարենային առարկայական ըլլալ, որովհետեւ ճշմարտութիւնը հաւանաբար անշարժ և մէկ հատիկ է, վաղուց ան աչքերուն զարկած պիտի ըլլար, և մենք հաշուի առնելու հարկին տակ չէինք ըլլար: զրականութեանց հանրապետութեան մէջ, տարբեր և հակասական այդքան կարծիքներ, և ամենէն կարեւոր նիւթերուն վրայ: Սակայն կարծիքներու այս տարբերութիւնը գոյութիւն ունի, անժխտելի իրողութիւն մըն է այդ:

Պէտք է հետեւցնել ուրեմն՝ մարդ ինքզինք կը խաբէ խօսելով առարկայական քննադատութեան մասին . . . Նոյնիսկ երբ համաձայնութիւն հաստատուած թուի երկի մը սքանչացողներուն միջև, կը դադրի ան ա'յն վայրկեանին որ զանոնք կը հրաւիրես տալու՝ իւրաքանչիւրն իր նախընտրութեան պատճառը: Այն ատեն կը նշմարես որ համաձայնութիւնը երևութական էր միայն, որովհետեւ «միեւնոյն գիրքի մը մէջ, կը հաստատեն անոնք ներհակ բաներ որոնք չեն կրնար միասին գտնուիլ հոն»: Ո՞ւրկէ՝ ասիկա: Անկէ՝ որ արուեստի երկը մասնաւոր բնոյթ ունի զոր զատորոշել և ճանչնալ ջանալու է:

Ֆիզիք աշխարհի մէջ շրջապատող առարկաներուն մենք կը ծանօթանանք մեր զգայարաններով: Եւ գեռ զգայարանները մեզ կրնան խաբել, ինչ որ յաճախ կը պատահի, և թերեւս անոնք մեզ բնաւ իրականութեան հետ հաղորդակցութեան մէջ չեն գներ, այլ միայն երեւոյթներուն հետ,

և իբր իրականութեան թարգմանութիւններ, անոնցմէ մեր առած տպաւորութիւնները, սակայն և այնպէս, կը ներկայացնեն բաւական կայունութիւն որպէսզի մենք կարենանք մեզ ապահով ուղղել հանապազօրեայ մեր կեանքին մէջ: Եւ, աւելին, այդ տպաւորութիւնները այդքան չեն փոխուիր մէկ անհատէն միւսը, մարդոց միջև համաձայնութիւնը, միաձայն հաւանութիւնը կարելի դարձնելով:

Բայց գրական երկի մը պարունակութեան ծանօթանալու կերպը կը տարբերի ամբողջապէս ֆիզիք աշխարհի հետ յարաբերուելու կերպէն: Հարկ է այժմ իւրացնել շարք մը զգացումներ և զաղափարներ, զգալու, իր հաշուին, օտարական հոգեվիճակներ, անոնց բարդութիւններովն ու երանգներովը, անոնց անակնկալներովն ու ալլանդակութիւններովը, և ինքզինք թողուլ քաղցրօրէն պարփակուիլ և թափանցուիլ մթնոլորտով մը ամբողջապէս տարբեր մեզի սովորականէն: Այս քաղցր և փափուկ գործողութիւնը ֆիզիք շփումի վայրագ խտութենէն բան չունի, կը կատարուի դանդաղօրէն ու իր համոզումով, գրեթէ միշտ անկատար կերպով, կը թողու այնքան տեղ երազին . . . Այդ պատճառաւ, նոյն երկէն, երկու անձ՝ կ'ընդունին այդքան տարբեր տպաւորութիւններ: Ընթերցողը կ'աշխատակցի հեղինակին, և պատկերին՝ որ ան կը տանի գիրքէն, իր անձնական բերումը խառնուելով՝ հեղինակին ներկայացուցած հոգեվիճակներուն հետ: Ի՞նչ կայ զարմանալի որ ըլլան այդքան օրինակ «Աստուածային կատակերգութենէն» որքան զայն կարգացող:

«Բոլոր գիրքերն ընդհանրապէս, և նոյն իսկ ամենէն սքանչելիները, կը գրէ Ֆրանս, ինձ կը թուին անհունօրէն նուազ թանկ իրենց պարունակածով քան ա'յն որ անոնց մէջ կը գնէ ընթերցողը: Լաւագոյնները, ըստ իս, անոնք են որ աւելին մտածել կուտան, և կուտան ամենէն ալլազան բաներ . . . Պէտք է քննադատը լաւ թափանցուի սա զաղափարով որ ամէն գիրք այնքան տարբեր օրինակներ ունի որքան ընթերցող, և որ պօէմա մը, տեսարանի մը պէս, կը կերպարանափոխուի բոլոր աչքերուն մէջ որ զայն կը տեսնեն, բոլոր հոգիներուն մէջ որ զայն կ'ըմբռնեն»:

Հետեւաբար մարդ շատ յաւակնոտ եղած կ'ըլլայ երբ ուզէ պարտադրել այլոց իմանալու մասնաւոր իր կերպը այսինչ երկը, և շատ պատրանաթափ՝ երբ կը խորհի թէ առարկայական ոչինչ կայ երկերու քննադատութեան մը մէջ հիմնուած գրեթէ ամբողջովին ենթակայական իմացականութեան մը վրայ:

Եւ ի՞նչ իրաւունքով մարդ պիտի հրապարտանար ըմբռնած ըլլալով ճշմարիտ իմաստը պօէմայի մը կամ ողբերգութեան մը, երբ անոնց հեղինակներն իսկ շատ պիտի չուարէին մեզի ըսելու այդ: «Անոնք որ գլուխ-գործոցներ կ'երկեն չեն գիտեր ըրածնին. բարեգործութեան անոնց վիճակը ի է անմեղութեամբ»:

Աւելին կայ: Գրական երկի մը իմացումը կը փոխուի ոչ միայն ընթերցողէ ընթերցող, քննադատէ քննադատ, այլ՝ նոյն մարդուն համար, ըստ վայրկեանի անոր տրամադրութիւններուն: Հաշուի առնելու է փոփոխութիւնները զորս ժամանակը կը ներմուծէ գրականութիւնը իմանալու մեր կերպին մէջ: Բազում անգամներ, Lemaître մեզի կ'իմացնէ ետ առած ըլլալը իր երիտասարդական հիացումներէն շատերը: Եւ, միայն մէկ օրինակ առնելու համար, V. Hugo-ի պաշտումին մէջ ապրելէ ետք, աչքերը լի անոր թովչանքով, և ականջները՝ հնչականութեամբ, կը զգայ, ներկայիս, իր հոգին գրեթէ օտարական բանաստեղծին հոգիին: Կը սխալէ՞ր իր երիտասարդութեան, և կամ հիմա՞ կը սխալի: Սակայն անկեղծ եղած էր այն ատեն, ինչպէս՝ այս պահու: Հաւասարապէս անկեղծ այս երկու հայեացներուն միջև, շատ յանդուգն պիտի ըլլար ան որ պիտի նախընտրէր մին միւսին:

Այս փոփոխութիւնը որ Lemaître կը զգայ իր հաշուին, չէ՛, ինչպէս պիտի կարծէին, հազուադիւրս երեւոյթ մը զատորոշելու իր գոյգէն քննադատը որ զայն կը խոստովանի: Մենք բոլորս ալ այդպէս շինուած ենք:

Աստիճանի տարբերութիւններ կրնան ըլլալ քննադատներուն միջև, բայց ոչ բունութեան: Ուրիշ աւելի, ուրիշներ նուազ, բայց բոլորն ալ կը փոխուին: Կրնան գըտնելիլ քննադատներ որոնք պիտի չհարտանան, և պիտի նախընտրեն պահել, հանրութեան առջև, գրեթէ անփոփոխ դիրք

մը, բայց ի հեճուկս անկեղծութեան, և դեր մը խաղալու պարտաւոր պիտի կարծեն ինքզինքնին, երեւակայելով որ իրենց համար արժանապատուութեան հարց է միշտ կրկնել այն որ ըսած են անգամ մը: Բայց անոնք որ անկեղծ են (ստեղծողները հաշուի չեն առնուիր) և միշտ կ'երթան մինչև ծայրը իրենց մտածումին, պիտի չկրնան նշմարել փոփոխութիւնները ամենէն ամուր նկատուած կարծիքներուն: Lemaître սապէս կը բանաձեւէ անվրիպելի հարկը փոփոխութեան, և իր հետեւանքները յարաբերաբար քննադատութեան առարկայականութեան՝ «փոփոխական, կը դիտենք աշխարհ մը որ կը փոխուի: Եւ նոյնիսկ երբ դիտուած առարկան յաւէտ հաստատուն է, իր ձեւերուն մէջ, բաւ է որ ոգին ուր ան կ'արտացոլայ, ըլլայ շարժուն և այլազան որպէսզի անկարելի ըլլայ մեզի՝ պատասխանատու ըլլալ վայրկեանի մեր տպաւորութենէն զատ ուրիշ բանի. . . Երկիրը կ'ընթանան մեր մտքին հայելիին առջեւէն. բայց որովհետեւ ընթացքը երկայն է, հայելին կը փոխուի այդ միջոցին, և երբ պատահամբ նոյն երկը վերստին գայ. . . նոյն պատկերը չտեսնուիր հայելիին մէջ»:

Եւ քիչ անդին ան կը յաւելու. «Բանի որ այդպէս է, քանի որ, ամենուն վրայ, ամէն ինչ ունայն է, սիրենք զիրքերը որոնք մեզի հաճելի են առանց մտահոգուելու դասաւորումներէն և համաձայնելով մենք մեզի հետ որ այսօրուան մեր տպաւորութիւնը պիտի չկապէ վաղուանը»: Համեստ և պատրանաթափ եզրակացութիւն, բայց միակ ճիշտ՝ աչքին մարդու մը որուն արգիլուած է կշտանալ ձգտիլ ցնորքներէ տարբեր բաներով, հաճելի և յուսահատեցուցիչ երեւոյթներու աշխարհի մը մէջ: Եզրակացութիւն՝ համաձայն France-ինն որ տրտում և քաղցր ժպիտով մը զայն կ'ընդունի երբ կը բանաձեւէ իր հաւատոյ հանգանակը սապէս՝ «Բանի որ լուելու և հրաժարելու քաղութիւնը չունէի, ուղեցի հաւատալ, հաւատացի: Հաւատացի գէթ իրերու յարաբերականութեան և երեւոյթներու յաջորդականութեան»:

Եթէ ընդունինք այս տեսակէտը, որոշ է որ կը պարտադրուի այն եզրակացութիւնը որ կը մերժէ քննադատութեան առարկայական ըլլալու կարելիութիւնը: Պատրաստ

ենք կրկնել սա կծու խօսքերը France-ին՝ «չկայ առարկայական քննադատութիւն, ինչպէս չկայ առարկայական արուեստ և բոլոր անոնք որ կը հպարտանան զնել իրենց երկերուն մէջ իրենք իրենցմէ զատ ուրիշ քան կը խարուին ամենէն նենգամէտ պատրանքէն: Ըշմարտն այն է որ մարդ ինքն իրմէ դուրս չի կրնար ելլել»:

Սակայն պիտի ընդունինք այդ տեսակէտը: Կը հարկադրէ՞ ան ինքզինք բացայայտութեան հարկաւորութեամբ:

Չկա՞յ ոչ մէկ միջոց ազատելու ենթակայականութենէ:

Դիտեցէ՛ք կերպարանքը որ կ'առնէ խնդիրը France-ի գրչին տակ, և լայնութիւնը որ ան կուտայ վէժին: «Չկայ ո՛չ առարկայական քննադատութիւն, ոչ ալ առարկայական արուեստ» կ'ըսէ ան: Եւ իրաւունք ունի կապելու քննադատութեան ենթակայութեան հարցը արուեստի ենթակայութեան, որովհետեւ արուեստագէտի մը համար, առարկայական ըլլալու անկարելիութիւնը ապացուցանելու պարագային միայն կարելի պիտի ըլլար ձեռնարկել նոյն ապացուցումին՝ քննադատութեան համար, քանի մը դժուարութիւններով: Արդ, չին է ենթակայական և անձնական արուեստին վէճը որ շատ մեկան հոսեցնել տուաւ: Տալու համար անուն մը միայն, Flaubert-ին Նամականին լի է նշմարներով և քննարկութիւններով որոնք կը ձգտին ապացուցանել թէ առարկայականութիւնը մեծ իտէալն է գրագէտին, և թէ արուեստագէտ մը նկատի կ'առնուի ա՛յն չափով որով յաջողած է իր երկէն բացակայիլ . . . բայց այս մեծ հակաճառութենէն դուրս կուգայ թէ կարգ մը հեղինակներ աւելի առարկայական են քան ուրիշներ, և կարգ մը սեռեր աւելի անանձնական՝ քան ուրիշներ: Դրական քննադատութիւնը չէ՞ ճիշտ սեռ մը ամենէն անանձնականներէն: Չունի՞ բնոյթ ձգտելու առարկայականութեան, հոգ չէ թէ բնաւ չհասնի անոր: Կամ, այլ եղբով, իրաւունք չունի՞ քննադատ մը ինքզինք հռչակելու առարկայական այն չափով իսկ ճիգին որ կ'ընէ՝ հասնելու համար առարկայականութեան:

«Պրանսական Գրականութեան Պատմութիւն» իր գիրքին մէջ, Gustave Lanson, վիճելով անձնական և անանձնական ար-

ուեստին հարցը, կը գրէ, մեծ թափանցողութեամբ՝ «Գիտական մեթոտով մը խըստիւ չհակադէմքող բոլոր «գաղափարներուն», մէջ կը մտնէ մաս մը երեւակայութիւն, յուզում և ենթակայական կամեցողութիւն, այսինքն՝ անանձնական արուեստին և անձնական բանաստեղծութեան դատորոշումը բացարձակ չէ, այլ՝ յարաբերական. և հոս, ինչպէս բարոյագիտութեան մէջ, պէտք է դատել զրազէտը իր ձգտումներուն և իր ճիգերուն, իր կամքին համեմատ»: Գրականութեան, ինչպէս բարոյագիտութեան մէջ, մտադրութիւնն է որ կը հաշուեն, անոր դիմելու ենք նախընտրաբար և գլխաւորաբար: Ինչպէս որ վէպ մը, ըստ իր սահմանումին, աւելի անանձնական է քան եղբերգութիւն մը, ինչպէս որ լաւ ողբերգութիւն մը մեզի կը ծանօթացնէ շատ աւելի նուազ իր հեղինակը քան տաղ մը կամ երգիծագրութիւն մը, այնպէս ալ քննադատական ուսումնասիրութիւն մը մեզի կը տեղեկացնէ նուազ քննադատին մասին քան երկին: Եւ բացայայտ չէ՞ որ ա՛յն ուսումնասիրութիւնները կը հաշուելին որ մեզի կը հայթայթեն քննադատուած գիրքին վրայ ամենէն աւելի տեղեկութիւններ, և ամենէն ամբողջական, տեսութիւններ՝ ամենէն շիտակ և ամենէն յստակ, մեկնութիւն՝ ամենէն թափանցող ու ամենէն խմաստուն, — այն ուսումնասիրութիւնները, մէկ բառով, որոնք մեզի թափանցել կուտան շատ խորը երկին իմացումին մէջ: Անոնք են որ իրաւունքով կ'արձանագրուին ենթակային «գրականութեան» մէջ:

ԱՄՓՈՓԵՑ

ՊԱՐԳԵԻ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

(Շարունակութիւն եւ վերջ՝ 17)



ԼԵԶՈՒՆԳԻՏԱԿԱՆ

ՀՆԴԵԻՐՈՊԱԿԱՆ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԷՆԻ ԴԻՐՔԸ ՆՐԱՆՑ ՄԻՋԵԻ(*)

Այս տախտակի մէջ մի կենտրոնի շուրջը շարուած են արիական, հայ, յոյն, իտալական, կելտական, գերմանական եւ բալթիկ-սլաւական խմբերը. ալբաներէնը, թոխարերէնը, կամիսերէնը, փոխգերէնն ու թրակերէնը մեծ մասամբ անյայտ լինելով՝ չենք առած տախտակի մէջ: 1-ից մինչև 15 համարներով նշանակուած են վերի նմանութիւնները. ուր որ խմբերը միանում են՝ նշանակուած են մի գծով. նրանից տարբեր ձև ունեցող լեզուները մնում են առանց գծի. եթէ կան մի եր-


թեամբ դուրս բերել հետեւեալ եզրակացութիւնները.

ա. Ոչ մի դէպքում ոչ մի բարբառ կատարեալպէս անկախ ու անջատ չէ միւսներից. նմանութեան գծերը անկանոն կերպով տարածուած են զանազան ուղղութեամբ. ուրիշ խօսքով որ և է բարբառ պարտաւոր չէ անպատճառ ամէն հարցում իր աջ կամ ձախ հարեւանի հետ զուգակից ընթանալու, այլ մերթ հակուած է աջ և մերթ հակուած է ձախ:

բ. Որովհետև լեզուաբանական օրէնքները ոստումներ չգիտեն և տախտակի մէջ էլ ոստումներ չկան, ուստի հետեւում է թէ յիշեալ 7 լեզուական խմբակները հընդհարողական նախաշրջանում էլ իրար համեմատութեամբ ունէին այն տեղագրական զիրքը, ինչ որ երեւում է տախտակի մէջ, որ և համատասխան է արդի աշխարհագրական զիրքին, անկախ նրանց մեծութիւնից և տարածութիւնից:

գ. Եթէ լեզուների խմբակցութեան արդի զիրքը համապատասխան է հնդեւրոպական նախաշրջանի դրութեան, դրանից հետեւում է թէ ուրեմն ազգերի գաղթը եղել է տարածմամբ և ոչ թէ ոստումներով. այսինքն նման սլաւական ժողովուրդների գաղթականութեան և ոչ գերմանականին. առաջինները Բալթիկ ծովի արեւելքից կանոնաւոր քայլերով դիմել են դէպի Սև ծով, Կովկաս և Ովկիանոս, իսկ երկրորդները խուժել են անկանոն կերպով Ամերիկա, Հնդկաստան, Ափրիկէ ևն: Անշուշտ եղել են նաև յախուռն արշաւանքներ, ինչպէս Կելտերը Ափրիկէ և Փոքր-Ասիա, բայց այդպիսի գաղութները ջնջուել և անհետացել են:

դ. Հակառակ այն բանին՝ որ բարբառները բնորոշ գծեր չունին, այնուամենայնիւ 7 խմբերը կարելի է բաժանել երկու զխաւոր բարբառի, արեւելեան և արեւմտեան: Արեւելեան ճիւղին են պատկանում արիական, բալթիկ-սլաւական, հայկական և ալբանական խմբերը, արեւմտեան



րորդ ձև ունեցող լեզուներ՝ զրանք էլ ստանում են զիգզադաւոր գիծ. իսկ եթէ որ և է հարցի մէջ որ և է լեզուի զիրքը անյայտ է, նշանակուած է կէտերով:

Այս տախտակից կարելի է հետևու-

(*) Շարունակութիւն՝ մեծամուկ հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործին (Բ. Գլուխ):

ճիւղին են պատկանում իտալական, կելտական և գերմանական խմբերը. իսկ յունարէնը բռնում է միջին դիրքը. Բալթիկ-սլաւական և արիական լեզուները մօտիկ հարեւաններ էին, սրանով էլ պէտք է բացատրել շատ բառերի նմանութիւնը այս երկուսի մէջ: Իտալական, կելտական և գերմանական խմբերը հնապէս կազմում էին մի խումբ. գերմանացոց բաժանումից յետոյ իտալական և կելտական ժողովուրդները ապրել են միասին, որից յետոյ նորից բաժանուել են:

Ե. Բարբառների այսպիսի բաժանումը ենթադրել է տալիս որ հնդեւրոպական առաջին ազգը մի շատ փոքր տարածութեան վրայ չէր բնակուում, այլ բաւական մեծ ու փռուած էր: Այդ ազգը չունէր նաև մի կուռ միութիւն, չէր կազմում մի քաղաքական ամբողջութիւն, չէր հպատակում միմիակ թագաւորի, այլ, ինչպէս արիական, յոյն, իտալական, կելտական, գերմանական, Բալթիկ ու սլաւական ժողովուրդների սկզբնական շրջանի քաղաքական կազմակերպութիւնն է ցոյց տալիս, ունէր արդի քրդերի նման աշխրեթալին կազմակերպութիւն: Նա ոչինչով նման չէր օրինակ աքեմենեան կայսրութեան մի և կուռ կազմակերպութեան, այլ ներկայացնում էր հին յունաց քաղաքական կազմակերպութիւնը, ուր իւրաքանչիւր քաղաք անկախ ու ինքնավար էր: Ըստ այսմ հին հնդեւրոպացի ազգն էլ բազկացած էր զանազան ժողովուրդներից, որոնք թէև իրենց ընդհանուր միութիւնը զգում էին և կարող էին ի հարկին միանալ իրար հետ և կազմել մի զաւնակցութիւն, բայց ապրում էին իրարից անկախ ու անջատ: Նրանք ունէին մի քաղաքակրթութիւն և կառավարում էին մի աղնուական դասակարգով, որ ունէր քաղաքական մեծ նշանակութիւն և այնպիսի հաստատուն ու ճկուն քաղաքականութիւն, որ կարողացաւ տիրապետել ու իրեն միացնել ամբողջ Եւրոպայի և Ասիայի մի խոշոր մասը:

Այժմ մեզ համար առանձնապէս կարեւոր է քննել հայերէնի դիրքը այս բոլոր լեզուների մէջ:

Նախ շեշտենք այն հանգամանքը, որ հայերէնը՝ յունարէնի նման մենակ ու առանձինն է. միւսները ներկայացնում են

մի քանի լեզուների խմբակցութիւններ. այսպէս արիականը կազմուած է հնդկերէնից ու պարսկերէնից (այս անուան տակ հասկանալով նաև զհնդերէնը և զանազան իրանական լեզուները), իտալականը կազմուած է ոսկեան-ումբրեան և լատինական լեզուներից, Բալթիկ-սլաւականը լիթւաներէնից և սլաւերէնից, գերմանականը և կելտականը ունին զանազան ստորագրեալ լեզուներ. նոյն իսկ թոյարերէնը ունի իր հետ քուչերէնը և ալբաներէնը մաս է կազմում լիւրիկեան ուրիշ լեզուների: Բայց հայերէնը ոչ մի այդպիսի ընկեր չունի: Սա չի նշանակում անշուշտ որ հենց սկզբից կամ ոչ մի ժամանակ հայերէնը իրեն յարակից լեզուներ չի ունեցել. կարող է պատահել որ նա էլ ունեցած լինի այդպիսի յարակից մի կամ մի քանի լեզու, որոնք յետոյ ձուլուած ու անհետացած լինին, բայց առայժմ դրանք անյայտ են և լեզուաբանութիւնը հայերէնի քննութեան ժամանակ գործ ունի ընտանիքի միայն մի անդամի հետ:

Հայերէնը պատկանում է բարբառների արեւելեան խմբակցութեան. 14 կէտերից երեքի համար յայտնի չէ թէ նա ինչ դիրք է բռնում. բայց մնացեալ 11 կէտերի մէջ 8 անգամ միանում է արիական խմբին, 7 անգամ յունականին և 4 անգամ սլաւականին: Մնացեալ երեք խմբերի հետ (իտալականի հետ 3, կելտական և գերմանական) հետ միանում է միայն երկերկու անգամ բայց դրանք բոլորն էլ ոչ թէ առանձնակի, այլ յունարէնի, սլաւականի կամ արիականի հետ միասին: Սլաւականի հետ միութեան 4 կէտերից 3-ի մէջ հայերէնը իր հետ ունի նաև արիականը և միայն մի կէտում (թ. 11) բաժանուելով բոլորից, միանում է սլաւականին: Յունականի հետ միութեան 7 կէտերից 5-ի մէջ հայերէնը իր հետ ունի նաև արիականը և միայն երկու կէտում (թ. 3, 14) բաժանուելով արիականից ու սլաւականից՝ միանում է յունականին և նրա հետ միասին իտալականին: Զկայ ոչ մի կէտ ուր հայերէնը միաժամանակ յունարէնի և սլաւականի հետ միացած լինի: Այս բոլոր հանգամանքները ցոյց են տալիս որ հայերէնը կանգնած է արիական, յունական և սլաւական խմբերի միջև և գործ չունի միւս եւրոպական լեզուների հետ:

Բացի այս ընդհանուր կէտերից, հայերէնի նմանութիւնը սլաւական կամ յոյն խմբի հետ, երևում է նաև հետեւեալ մասնաւոր պարագաների մէջ.

ա. Հայերէնի մէջ կատարեալի փոխարէն գործ է ածուում եալ եմ բաղադրեալ ձեւը՝ ճիշտ ինչպէս սլաւականի մէջ (հմմտ. ուսւ. չիսալ, պիսալ)։

բ. Գործող անձ ցոյց տալու համար հայերէնը օղ-աւղ մասնիկը՝ որ յառաջանում է ալ ձեւից, այս մասնիկը չոյն է հալ. ճիւ հոմանիշ մասնիկի հետ (հմմ. ուսւ. պիսասել), մինչդեռ յոյնն ու լատինը ունին սեր. անյայտ է արիականը։

գ. Հնիւ. ր՝ բառի վանկում դառնում է ա՝ հայերէնի, յունարէնի, ինչպէս և գերմանական, իտալական և կելտական խումբերի մէջ. մինչդեռ արիական և Բալթիկ-սլաւական խմբերի մէջ դառնում է ի։

դ. Հնիւ. լյ ձայնախումբի մէջ լ ստանում է երկու ձև. որոշ լեզուներ վերածում են բաղաձայն վ (այսպէս են հնդկեր, յոյն, իտալականն ու կելտականը), ուրիշներ վերածում են ձայնաւորի և նախորդ ձայնաւորի հետ կազմում երկբարբառ. այսպէս են իրանեանը, Բալթիկ-սլաւականը և գերմանականը. հայերէնը այս կէտում միանում է հնդկերէնի և յունարէնի հետ.

ե. Հնիւ. ք ձայնը հայերէնի, ինչպէս և սլաւականի մէջ դառնում է խ։

զ. Հոլովական բն-մ մասնիկների մէջ՝ հայերէնը գործիականում ունենալով բ, վ, լ, միանում է արիական և յոյն լեզուներին և ոչ թէ սլաւական և գերմանական լեզուներին, որոնք ունին մ։

է. Թուականների տասնաւորները հայերէնի մէջ կազմուում են սուն ձեւով, որ համապատասխանում է յն. կոնսա ձեւին. մինչդեռ Բալթիկ-սլաւական և գերմանա-

կան լեզուները գործ են ածում այս պարագային ուղղակի «տասն» բառը։

ը. Եզակի հայցականի վերջաւորութիւնն է մ կամ ն. արիականն ու իտալականը ունին մ, յոյնը, բալթեանն ու միւս լեզուները ն. հայերէնը այս վերջինին է կցւում և ոչ արիականին, ինչպէս ցոյց է տալիս քան-լտ. քւամ։

ր. Ստուգաբանական տեսակետով հետեւեալ հայերէն բառերը միանում են Բալթիկ-սլաւական խմբի հետ.

բոլք, բոկոսն, գեղծ, գեջ, գորս, դեռ, եզր, եղեւին, քաքաւել, քեկն, կածան, կարք, կեղ, կողք, կրծել, հեղուլ, հող, ձաղկ, մաղթել, քամակ, քեքի, մածանիլ։

ձ. Ընդհակառակը հետեւեալ բառերը միանում են յունականի հետ. երեւիլ, խստոր, ծաղր, ծիծաղ, ծուռ, կամուրջ, մեծ, մոգի, սին, սիւն, սուս, փոյր։

Մի քանի բառ՝ որոնք գտնւում են եւրոպական լեզուների մէջ, բայց չկան արիականում, կան նաև հայերէնում. այդպէս են աղ, աղս, աղօր ևն։ Ընդհակառակը մի խումբ բառեր որ կան եւրոպայի արեւմտեան և հիւսիսային լեզուներում և չկան յունարէնում, չկան նաև հայերէնում. օրինակ՝ ցանել, հասիկ ևն։ Չուկն բառը միանում է յունարէն և լիթուաներէն ձեւերի հետ։

Այս բոլոր նմանութիւններն ու տարբերութիւններն ցոյց են տալիս որ հայերէնը գտնւում է արիական, սլաւական և յոյն լեզուների միջին դիրքում և առանց լիովին կցւելու դրանցից որ եւ է մէկին, նման է արիականին, հակում է յունականին և աւելի փոքր չափով էլ սլաւականին։ Նախահայերենիքում իր բնական գաւառն էլ կարիքի է որոշել ըստ այսմ։

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(ՂԵՐՋ)

ՊԵՏԱՊՈԼԻՏԵԱՆ ՀԵՄԵՐ

ԴԻՐՔ՝ ԵՒ ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՔ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՆԳԵՊ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

(Նոր. Սրոբ, Ապրիլ 1951, էջ 122)

Աշոտ նոր շրջան մը բացաւ իր յանդուգն մտադրութիւններովն ու ձեռնարկներով: 858 ին Պոլսոյ պատրիարքական զահր բարձրանալով՝ այդ երիտասարդ իշխանագլուներ իր ամբողջ հանճարն ու հնարագիտութիւնը գործածեց բաժնելու համար Յոյն Եկեղեցին Լատինականէն. նպատակին հասնելու համար նախագզուութիւններ ձեռք առաւ. ուզեց նախապէս Արեւելի փոքր Եկեղեցիներն իրեն միացնել, եւ ի միջի այլոց դիմեց նաեւ Զաքարիա Զազեցի հայրապետին (854-77), որ իրեն նման ղէպբերու յանկարծական պահանջովը բարձրացած էր կաթողիկոսական Աթոռ: Այդ թղթակցութիւններէն մեզի հասած են միայն Փոտի «առ Աշոտ» թուղթը (Գիրք ԲՊԲ. 279-82), եւ Աշոտի պատասխանը զոր զրած է Սահակ Մառութ որ եւ Ապիկուրէյ (անդ, էջ 283-94, հմմտ. Ասողիկ, էջ 174): Փոտէն ուրիշ նամակ մըն ալ կայ ձեռագիր, որուն վաւերականութիւնը կասկածելի է իր անհարթ ոճովն ու սխալաշատութեամբ(*): Մառութ շատ յաջող կերպով կը ներկայացնէ Հայ Եկեղեցին, Կիւրդի, Աթանասի եւայլն բացատրութիւններն յիշելով. զՔրիստոս կը դաւանի ըստ Կիւրդի ուղղափառ բանաձեւին, «միացեալ յերկուց բնութեանցն անշարթ եւ անբակ միաւորութեամբ» (էջ 284). եւ բնագրական համեմատութիւններով զուգակշիռը կ'ընէ Նեստորի խօսքերուն եւ Լեւոնի Տումարին, ու նոյն կը գտնէ զանոնք ի հիման, հետեւաբար նաեւ հերետիկոսական: Փոտի ձեռնարկն ալ միութեան տեսակէտէն աւելի արդիւնք

մը չունեցաւ քան Գերմանոսինը. թէեւ յաջողեցաւ իր բուն նպատակին մէջ որ էր «Արեւելից Հերձուած»ը: Գէորգ եւ Մաշտոց կաթողիկոսներու օրով նշանակելի ղէպք մը չկայ Եկեղեցական միութեան խնդրոյն նկատմամբ. միայն քաղաքական յարաբերութիւններ բիջ մը աւելի կը սերտանան Աշոտ Ա. ի զահակալութեամբ, որ թագ կ'ընդունի Յունաց կայսրէն եւ Ամիրապետէն միանգամայն: Յովհաննէս Զ. Պատմաբան (897-930) աւելի դժբախտ կացութեան մը ենթարկուեցաւ. բանտարկութիւններէ եւ շղթաներէ յոգնած՝ վայրկեան մը փափաքն ունեցաւ երթալու կայսեր մօտ որ խոստացած էր հանգիստ ապաստան շնորհել իրեն. «բայց, կը զրէ նա իր Պատմութեան մէջ (206), զմտաւ ածեալ թէ գուցէ գտցի որ եւ ընդ ակամբ հայեացի՝ զանդ երթալն իմ ի քաղկեդոնիցսն յարակցիլ ինձ համարեալ, եւ ապա այսպէս ո՛չ կամեցայ զնալ ի գայթակղութիւն մտաց տրկարաց»: Այսպիսի փափուկ էր ահա կաթողիկոսին դիրքը եւ այսպիսի զօրաւոր՝ ժողովուրդին հակակրութիւնը հանդէպ Յոյներուն կամ քաղկեդոնականութեան: Պատմաբանի երեք անմիջական յաջորդները՝ որոնց օրով Աթոռը Աղթամար փոխադրուեցաւ, նըշանակելի դեր մը չունին ինչպէս ուրիշ նոյնպէս նաեւ յունա-հայկական խնդիրներու մէջ: Անանիա Մոկացին է որ (943-965) մինչեւ այն ատեն նմանը չի տեսնուած խրատութիւններու դիմեց: Յոյներն սկսած էին յայտնի ոտնձգութիւններ ընել իրենց բաժնի Հայոց մէջ՝ որոնցմէ շատերը կը փախչէին կրօնական մոլեռանդութեան բիրտ արտայայտութիւններէն. իսկ զայթողները կրկին կը մկրտուէին Յոյներու կողմէ՝ որոնք անփաւեր կը նկատէին Հայոց մկրտութիւնը:

(*) Այս մասին երկար պիտի չխօսինք հոս. անցեալ տարի արդէն ուսումնասիրած ենք զայն եւ մանրամասնաբար ծանօթարանելէ վերջ՝ չըրկած՝ Օրմանեան Սրբազան Պատրիարքին:

Մոկացի խստաբարոյ հայրապետը հանրային գայթակղութիւնը բառնալու եւ քաղկեդոնիւններուն դաս մը տուած ըլլալու համար միանգամայն՝ ժողով գումարեց նըշանաւոր վարդապետներ հրաւիրելով. «եւ սուրա մամնեքեան խորհրդական բնութեամբ, ընտրութեամբ գրովք աստուածայնովք, հրամանաւ Տեառն Անանիայի զբաղկեղոնական մկրտեալսն կրկին անգամ հրամայեցին մկրտել» (Ասողիկ, էջ 165): Ասողիկ կը ջանայ աստուածաբանական ձեռնարկութիւններով ապացուցել ու արդարացնել Հայ Եկեղեցւոյ ներողամիտ ոգւոյն այս անօրինակ խստացումը. աւելի ճիշդ կ'ըլլայ սակայն անոր մէջ հակազդեցութիւն մը միայն տեսնել յունական սնամտութեան եւ մոլեռանդ ամբարհաւանութեան դէմ: Անանիայի յաջորդն ու ձեռնասուներ Վահան-իկ՝ նուազ խիստ վարուելով՝ զահագուրկ եղաւ ժողովական որոշմամբ: Խաչիկ կաթողիկոսի (973-92) անունէն անբաժան պիտի ըլլայ Հայ Եկեղեցւոյ եռանդուն պաշտպանի համբաւը. իր օրով յունական ոտնձգութիւնները աւելի սաստկացան. Սեբաստիոյ յոյն մետրապոլիտը սկսաւ նեղել Հայերը. քահանաները շղթայակապ զրկեց Պոլիս եւ Գաբրիէլ աւագերէցը բրածեծ սպաննեց (Ասողիկ, էջ 189): Հակաքրիստոնէական այս բիրտ հալածանքներու առջեւ տեղի տուողները կազմեցին հայ-հոռոմները, որոնք գոյութիւն ունին մինչեւ այսօր: Արշարունի հայրապետը տեսնելով որ Սեբաստիոյ Յոյները նոյն իսկ «արգիլին զժամածայն հայոց», եւ քաղկեդոնական նախանձայուզութեամբ նախատական թղթեր կ'ուղղեն իրեն, գրաւոր պատասխանեց անոնց. «մեր ո'չ թշնամութեան բանս հակառակ թշնամեաց ձերոց գրեմք. զի ո'չ մեր-եւ ո'չ եկեղեցիքն Աստուծոյ ունիմք այնպիսի սովորութիւն, որպէս ասէ Պօղոս երանելին». ամբողջ նամակը զոր Ասողիկ պահած է (էջ 190-235) ծայրէ ծայր քաղուածն մըն է ուղղափառ Հայերնու բանածներուն. «Երկուց զոյութեանցն կատարեցելոց միաւորութիւն», (Կիրեղ), եւայն. բուն նպատակն է յոյն ուղղափառներու վկայութեամբ հերքել Քաղկեդոնի վարդապետութիւնը: Խաչիկ կաթողիկոսէն ուրիշ նամակ մըն ալ զոր գրած է Սամուէլ Կամբջածորեցի՝ կը տեսնենք Գիրք Թղթոցի մէջ (էջ 302-322),

ուղղուած Մելիտինոյ Թէոդորոս մետրապոլիտին: Սրամիտ բննադատութեամբ համեմուած ճշմարիտ հաւատոց վերլուծում մըն է այն. «իբրեւ զբաջ հովիւ զհետ ընթացեալ որպէս մոլորելոց, հրաւիրեալ էք զմեզ թղթովս ընդ այլ հեթանոսս՝ ի կաթողիկէ եկեղեցի՝ ի հաւատս ճշմարիտս՝ եւ առ զաւագանն երկաթի որ մանրէ զաշխարհ: Բարի է հրաւէրդ, եղբայր սիրելի, բայց անագան է յոյժ. այլք նախ քան զեւզ եւ քան զբազումս հասին առ մեզ հրաւիրակք ի Ս. Հոգւոյն ... բայց դու ո'չ բարիոր զործես, զի ո'չ միայն ի մատասաներորդ ժամուն ըստ աւետարանին, այլ ընդ երեկս կամ թէ ի մէջ գիշերի տաս զհրաւէրդ ... դադարեաց, ո'վ սիրելի, յայդմ խնդրոյ. թո'ղ զմեզ եւ երթ լեր աւետարանիչ, քարոզ եւ հրաւիրակ այնոցիկ որք ոչ ճանաչին զԱստուած» (էջ 303): «Ո'չ երկու բնութիւն աստուածութեանն եւ մարդկութեանն, եւ ո'չ շփոթութիւն, այլ միութիւն անշփոթաբար» (315), այս է իրենց դաւանութիւնը՝ ըստ Նիկիականին «զոր ունիմք առանց յաւելման եւ պակասութեան» (304): Կամբջածորեցիի այս նամակը զեղեցկագոյն յիշատակարան մըն է, գրական յաջող արտայայտութեամբ եւ աստուածաբանական ներհուն հմտութեամբ: Խաչիկ հայրապետի մահէն վերջ խնդիրները շատ տխուր հետեւանքներու յանգեցան: Հայոց քաղաքական վիճակը տագնապալի էր: Նախարարներն սկսան ներքին երկպառակութիւններու եւ արտաքին շարժառիթներու պատճառով իրենց երկիրներն յունական զաւառներու հետ փոխանակել: Դաւիթ Կիրապաղատ՝ հակառակասէր ոգիով՝ իր աշխարհը կտակեց Վասիլ կայսեր՝ որ փութաց տէր կանգնիլ անոր: Յոյները զինուորական ուժով մտան ի հայս. Սարգիս Ա. Սեւանցի կաթողիկոս (992-1019) հաշտարարի դեր կատարեց իշխաններու եւ կայսեր միջեւ: Յոյներն ալ յարմար չի դատեցին այդ միջոցին քաղկեդոնական խնդիրներ յուզել՝ ուրիշ աւելի մեծ շահեր չի փտանգելու համար: Պետրոս Գետադարծ (1019-58) տխուր էջ մը կը բանայ հայրապետներու շարքին մէջ:

ՇԱԽԱՐՀ ՎՐԴ. ՍԱՀԱԿԵԱՆ

(Նամասակ)

(Շարունակելի՝ 3)

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

Ս. ԷԶՄԻԱՇՆԻ

Պաղտատի նախկին առաջնորդ Դեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեան օգտուելով Ամենայն Հայոց Հայրապետի պատուիրակ Դեր. Տ. Վահան Արքեպս. Կոստանեանի էջմիածին վերադարձի առիթէն՝ յանձնեց պատուիրակին Ս. էջմիածնի անուան Պաղտատցիներէ նուէր տրուած երկու եպիսկոպոսական զգեստ արծաթամթել ձեռագործ կտորներէ կարուած, նուիրուած Ս. էջմիածնին Պաղտատի բարեպաշտ տիկիններէն.

Տիկ. Աստղիկ Իսկէնտէր Մարգարեանէ շուրջառ մը. — Տիկ. Ծաղիկ՝ Արզար Յովհաննէսեանէ շուրջառ մը. — Տիկ. Էլիզէ Մինաս Մինասեանէ հմիտորոն եւ զգեստի միւս մասերը:

Իր կողմէ պատուիրակին յանձնեց նոյնպէս եօթ եպիսկոպոսական մատանիներ յանձնելու համար Վեհափառ Հայրապետին, որպէս նուէր Ս. էջմիածնին:

Բացի վերոյիշեալ նուէրներէն Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեան Երուսաղէմի Պատրիարքական Տեղապահ Դեր. Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեանի միջոցաւ իր կողմէ նուէր ղրկեց Երեւանի Կոնգ. Թաղի Ս. Յովհաննէս Եկեղեցիին քահանայական մետաքսեայ զգեստ մը իր մասերով եւ սեղանի մեծ սաղափէ խաչ մը Ս. Յովհաննէս Եկեղեցւոյ խորանին համար:

Վերոյիշեալ բոլոր նուէրները Պապրիարքական Տեղապահ Դեր. Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեանի եւ Դեր. Տ. Վահան Արքեպս. Կոստանեանի միջոցաւ յանձնուած են ըստ պատկանելոյն:



Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԲԵՄԱԿԱՆՔ

● Բշ. 1 Հոկտ. — Յիւսակ Մեռեց. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Գլխաղբի մատրան մէջ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Գարեգին Արեղայ Գաղանձեան: Յետ Ս. Պատարագի Միաբանութիւն եւ ժողովուրդ թափօր կազմած, նախագահութեամբ Դեր. Տ. Սուրէն Ս. Եպս. Քէմհանեանի, այցելեցին գերեզմանը Երջանկայշատակ Տ. Կիւրեղ Ս. Պատր. Հօր, եւ ապա հին կրատան ու Զամ-Թաղի գերեզմանաւայրերը, ուր կատարուեցան հանգստեան կարգեր:

● Կիր. 7 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնաշարկ մատրան մէջ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Զաւէն Արզ. Զինչիւսեան:

● Ուր. 12 Հոկտ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնը պաշտուեցան Ս. Քաղաքի Ղպտոց Ս. Գէորգ Եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Դեր. Տ. Նորայր Ս. Եպս. Պողարեանի:

● Եր. 13 Հոկտ. — Ս. Դեղայ Զօրաւարին. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ Եկեղեցւոյ մէջ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Վարուժան Արեղայ Գաղարանեան: Քարոզեց Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան, բնաբան ունենալով «Եթէ ոք կամիցի գալ զկնի իմ, ուրացի զանձն իւր»: Յետ Ս. Պատարագի հոգ. վարդապետ հայրեր պատուասիրուեցան Ղպտոց Հոգ. Տեղէն: Հանդիսաւոր երթ ու դարձին կը նախագահէր Դեր. Տ. Նորայր Ս. Եպս. Պողարեան:

Յետ միջօրէի ժամը 2.30ին, Դեր. Եպիսկոպոսունք եւ հոգ. վարդապետ հայրեր, զխաւորութեամբ Դեր. Տեղապահ Ս. Հօր, իջան Ս. Յարութեան Տաճար: «Հրաշափառ»ի հանդիսաւոր մուտքէն եւ Ս. Գերեզմանի ուխտէն ետք, թափօրը Ս. Գերեզմանին շուրջանակի դառնալով՝ բարձրացաւ Բ. Գողգոթայի Հայամատուռը, ուր տեղի ունեցան երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին մեծահանդէս նախատօնակը:

● Կիր. 14 Հոկտ. — Տօն Վարագայ Ս. Խաչին. առաւօտեան ժամը 6ին, Միաբանութիւնը զըլխաւորութեամբ Դեր. Տ. Սուրէն Ս. Եպս. Ի իջաւ Ս. Յարութեան Տաճար: Գողգոթայի մատրան այցելութիւնէն յետոյ առաւօտեան ժամերգութիւնը կատարուեցաւ մեր վերնամատուռին մէջ: Ժամը 8ին, պաշտօնական թափօրով Տաճար մուտք գործեց Դեր. Տեղապահ Ս. Հայրը: Հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուց Դեր. Տ. Սուրէն Ս. Եպս. Քէմհանեան, որ նաեւ քարոզեց բնաբան ունենալով «Այլ ինձ քաւ լիցի պարծիլ, բայց միայն ի խաչ Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Յետ Ս. Պատարագի Միաբանութիւն եւ ժողովուրդ հանդիսաւոր գնացքով վերադարձան Մայրավանք:

● Կիր. 21 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Պատարագին էր Հոգ. Տ. Սշական Արք. Մինասեան:

● Ուր. 26 Հոկտ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակը կատարուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Ս. Հօր:

● Շր. 27 Հոկտ. — Ս. Թարգմանչաց Վարդապետացն, հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Պատարագին էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան, որ և խօսեցաւ կուռ քարոզ մը պանծացնելով Թարգմանչեան հոյիւն անմեռ յիշատակը: Յետ Ս. Պատարագի, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Ս. Հօր, կատարուեցաւ հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտօն, Ս. Աթոռոյ մեծանուն բարերար վաճ. Գալուստ Պէյ Կիւլպէնկեանի ծնողաց հոգւոցն ի հանգիստ:

Այսօր ըլլալով նաև օր անուանակոչութեան Գեր. Տեղապահ Ս. Հօր, յետ Ս. Պատարագի բաժանդակ Միաբանութիւնը և ուսանողութիւնը բարձրացան պատրիարքարան ի շնորհաւորութիւն: Գեր. Տեղապահը ընդունեց և պատուաբերեց զիրենք պատրիարքարանի փոքր զանիւնին մէջ: Այսօր Գեր. Տեղապահ Հօր հետգնտէ շնորհաւորութեան եկան Ս. Աթոռոյ պաշտօնէութիւնը, ուսուցչական կազմը և զանազան ազգայիններ:

Իսկ Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեցին Ս. Թարգմանչաց Վարժարանի երկսեռ փոքրիկները, զեկաւարութեամբ Հոգ. Տ. Գարեգին Արք. Գաղանճեանի:

● Կիր. 28 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատուռին մէջ: Պատարագին էր Արժ. Տ. Արշաւիր Բանանայ Սևտալեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Գշ. 9 Հոկտ. — Կ. ա. ժամը 9ին, Ամերիկայէն Մայրաւանք ժամանեց Ս. Աթոռոյս Ամերիկայի Նուիրակ Հոգ. Տ. Սերոփէ Վրդ. Մանուկեան, Հոգ. հայրսուրբը վանքի աւագ դրան առջև ընդունուեցաւ վարդապետ հայրերէ և ուսանողութեան կողմէ, ու առաջնորդուեցաւ Մայր Տաճար, կատարելու իր ուխտը: Ապա առաջնորդուեցաւ պատրիարքարան ուր ընդունուեցաւ Գեր. Տեղապահ Հայրէն և Գեր. Եպիսկոպոսներէն և եղան ողջագոյնումի փոխադարձ ջերմագին արտայայտութիւններ:

— Այսօր Սիւրիա-Լիբանանէն Մայրաւանք վերադարձաւ նաև Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան, Հոգ. հայրսուրբը Պատ. Տնօրէն Ժողովոյ հրահանգով մեկնած է, Ժառանգաւորաց վարժարանին համար նոր աշակերտներ գտնելու պարտականութեամբ, ինչ որ կատարած է յաջողութեամբ: Կը սպասուի աշակերտներու մօտաւոր ժամանումին:

— Կ. ա. ժամը 9.30ին, Անկլիքան Եպիսկոպոսը Գեր. Տ. Ստուարթ, ընկերակցութեամբ Կեր. Եպիսկոպոսարանի երկու երէցներուն, այցելեց Գեր. Տեղապահ Ս. Հօր, շնորհաւորելու զինք և երկու նորապսակ եպիսկոպոսները:

● Եշ. 18 Հոկտ. — Այս առաւօտ, Գեր. Տեղապահ Ս. Հայրէն, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Սերոփէ Վրդ. Մանուկեանի, Ամմանի գծով Պէյրութ մեկնեցաւ ի տեսութիւն Ներսէսազարդ Տ. Տ. Գարեգին վին. Կաթողիկոսին, և վերադարձաւ Գշ. 24 Հոկտ. ի Կ. ա. ժամը 11ին:

● Բշ. 29 Հոկտ. — Յօրհանանի Հալիմական Թագաւոր Ն. Վ. Թալալ Ա. ի Երուսաղէմ առաջին պաշտօնական այցի առթիւ. ի շարս Երուսաղէմի զանազան կրօնապետներուն, մեր կողմէ զիմաւորութեան գացած էր Գեր. Տ. Սուրէն Ս. Եպի. Քէմհանեան, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի. նոյն օրը անոնք ներկայ գտնուեցան նաև, Ալ-Ջահրա պանդոկի մէջ ի պատիւ վին. Թագաւորին տրուած հաշկերոյթին:

ՕՐ ՏՕՆԱԵՄԱՌՈՒԹԵԱՆ

ՌԱՄԱԼԷԹԻ (ԻՍՐԱԵԷԼ)

Ս. ԳԷՈՐԳԵԱՅ ՎԱՆԳԻՆ

Ամենէն ժողովրդային տօնախմբութիւններէն մէկն է անիկա. ինչպէս անցեալ տարիներուն այս տարի ևս, Ս. Գեորգայ տօնին առիթով վանքը այցելած են բազմաթիւ հայ ուխտաւորներ, իօրայէլի բոլոր քաղաքներէն:

Յատկապէս տօնախմբութեան համար, Ս. Աթոռէն զրկուած էին Հոգ. Տ. Յարութեան Վրդ. Մուշեան և Հոգ. Տ. Գարեգին Արք. Գաղանճեան: Հօն գտնուած են նաև իօրայէլէն, Եսֆայի Տեսուչ Հոգ. Տ. Բարդէն Վրդ. Ապատեան և Հայ-Փայի Հոգ. հօփի Տ. Տրդատ Վրդ. Պէրպէրեան:

Սկսելով Ուր. 12 Հոկտ.էն, կատարուած են եօթեայ (Ուր. Շր. Կիր.) պատարանք, Ժամերգութիւն, Ս. Պատարագ և մատաղ օրհնութիւնները: Հոգ. հայրերը կարգաւ պատարագած և քարոզած են ի մխիթարութիւն հաւատացեալ ժողովուրդին:

ՎԵՐԱՐԱՅՈՒՄ Ս. ԱԹՈՌՈՅՍ

ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐՈՒՆ

Ա. — ԵՐՈՒՍԱԼԷՄ

Ա. — ԺԱՌ. ՎԱՐՃԱՐԱՆ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆ

Բշ. 8 Հոկտ. Կ. ա. ժամը 8ին, Գեր. Տեղապահ Սրբազանը, ընկերակցութեամբ Գեր. Եպիսկոպոսներու, Ժողովական և ուսուցիչ վարդապետ հայրերու, պաշտօնական թափօրով, իջաւ Ժառանգաւորաց վարժարան, որու մեծ դարպասին առջև զիմաւորուեցաւ վարժարանի ուսուցչական կազմէն, բարեկեան օտրակապներէն և աշակերտութենէն: Վարժարանի քայլերգով թափօրը յառաջացաւ զէպի մեծ հանդիսաւորանք ուր

կատարուեցաւ Ս. Աւետարանէն և Նարեկէն ընթերցումներ: Ապա խօսք առաւ Գեր. Տեղապահ Սրբազանը, տալով իր պատգամը ուսանողութեան և ուսուցչական կազմին: Վարժարանի ուսուցչական կազմին թիւն է 12, որոնցմէ ութը վարդապետ հայրեր են:

Բ. — Ս. ԹԱՐԳՄԱՆԱՅԱՅՍ ԿԱՐԺԱՐԱՆ

Ժառանգաւորաց վարժարանի բացման հանդէսէն ետք, Գեր. Տեղապահ Սրբազանը Նոյն թափօրով առաջնորդուեցաւ Ս. Թարգմանչաց վարժարան: Մուտքին զիմաւորուեցաւ վարժարանի առժ. Տեսուչ Զոգ. Տ. Գարուծիւն Վրդ. Մուշեանի գլխաւորութեամբ ուսուցչական կազմէն: Իսկ վարժարանի հանդիսարանին մէջ կը սպասէին աւելի քան 600 երկսեռ աշակերտներ: Փոքրիկներու կողմէ երգուած Տէրունական Աղօթքէն յետոյ՝ Գեր. Տեղապահ Ս. Հայրը տուաւ իր օրհնութիւնն ու պատգամը ուսուցչական կազմին և բովանդակ աշակերտութեան:

Բացման արարողութիւնէն ետք, Գեր. Տեղապահ Ս. Հայրը և Միաբանութիւն, հիւրասիրուեցան վարժարանի Տեսչարանին մէջ:

Ս. Թարգմանչաց վարժարանի ուսուցչական կազմին թիւն է 20, անոնցմէ ութը վարդապետ հայրեր են, որոնք տնտեսական զոտւարին կացութեան այս օրերուն յանձն առած են քրիստոնէական հաստատութեան:

Ժառանգաւորաց և Թարգմանչաց վարժարաններու Տեսչութիւնը՝ Ամերիկայէն վերադարձին, ստանձնած է Զոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեան:

Բ. — ԱՄՄԱՆ

ՀԵԹՈՒՄԵԱՆ ԿԱՐԺԱՐԱՆ

Առաք. Ս. Արթուր

Դ. 9 Հոկտ. առաւօտուն տեղի ունեցաւ Ամանի Հեթումեան վարժարանի բացումը, ի ներկայութեան ուսուցչական կազմին և աշակերտութեան: Միահամուռ երգուած և արտասանուած աղօթքներէ յետոյ խօսք առաւ վարժարանի ժրջան Տեսուչը՝ Զոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուկեան, որուն վերաբացումի պատշաճ խրատականէն յետոյ՝ խօսք առաւ հիւրաբար ներկայ գտնուող Զոգ. Տ. Կիրեղ Արեղայ Գաբրիէանը. թելադրելով բոլորին, ամէն տեսակի հատուածական նկատողութիւններէ զերծ սէր և նուիրում, հանդէպ Հայ Ժողովուրդին, Հայ եկեղեցիին և Ս. Գաբրիէանց Առաքելական Ս. Աթոռին:

Ներկայ տարեշրջանի սկիզբը երկսեռ աշակերտութեան թիւն է 250, Արձանագրութիւնները աւարտած չլլալով, սոյն թիւը տակաւին կրնայ աւելնալ, իսկ ուսուցչական կազմին թիւն է 13:

Գ. — ՌԸՍԷՅԱ

Անդր Յորդանանեան սոյն գիւղակին մէջ ունինք 20 տուննոց փոքրաթիւ Հայութիւն մը, իրենց սեփական մատուռ-վարժարանով:

Վարժարանը ունի 30 երկսեռ փոքրիկներ, որոնց ուսուցչուհին է Օր. Ագապի Գարանեան. իսկ Լ. Բ. Ը. Միաբանը տարեկան որոշ նպաստ մը յատկացուցած է սոյն ծաղկոցին:

Գիւղակին կրօնական և կրթական հոգը յանձնուած է Ամանի հոգ. հովիւին, որ պարբերաբար կ'այցելէ գիւղակ ընթացք տալու համար անոնց վարչական, կրթական գործերուն և հոգեւոր միախառնութեան:

Իսկ անցեալ ամիս Ս. Աթոռի կողմէ յատկապէս ղրկուած էին չորս սարկաւազներ և խումբ մը աշակերտութիւն, գլխաւորութեամբ Զոգ. Տ. Վարուժան Արդ. Գապարաճեանի, որոնք եւօրեայ արարողութիւններով միախառնուած էին տեղւոյն Հայութիւնը:

Դ. — ԻՍՐԱԷԷԼ

Պաղեստինեան պատերազմի հետեանքով իսրայէլի հայութիւնը իր մէկ հինգերորդին ինքն ըլլալով, փակուած են Եաֆայի և Հայֆայի մեր վարժարանները. ասոնց փոխարէն այսօր Հայֆայի և Աթլիթ կէտ հայաբնակ գիւղին մէջ, Ս. Աթոռիս հովանաւորութեան ենթակայ երկու մշակոցներ կան, որոնք ևս այս տարի վերաբացուեցան:

ԳՅԱՆԱՆԱՅԱՆ ԶԵՆԱԳՐԱԴԱՐԱՆԻ ՆԻՆԱՍԻՈՅ ՄԷՋ

Հոկտ. 21ին, Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ, Կիպրոսի Արժանընտիր Առաջնորդ Գեր. Տ. Ղեւոնդ Եպս. Զէպէյեան, կատարած է Քահանայական ձեռնադրութիւնը, Տիար Ռաֆայէլ Աւագեանի, վերակոչելով զայն Տ. Վարդան Քննչ:

Մասնաւոր զոհունակութեամբ վերահասու եղանք այս լուրին, ոչ միայն անոր համար որ Տ. Վարդան եղած է 25 տարիներու պաշտօնեան արդիւնաւոր Ս. Գաբրիէանց Տպարանին, այլ նաև Տ. Վարդան իր զարգացումով, իր կենցաղավարութեամբ և այլ կարգի բարեմասնութիւններով կը ներկայանայ իբրեւ արժանաւոր անձնաւորութիւն մը Քահանայական Ս. Կոնուին:

Տ. Վարդան ծնած է Բաղէշ 1908ին, իբրեւ մեծ եղբուն արհաւիրքներէն ազատած մանուկ կը վայելէ պաշտպանութիւնը Արարատեան որբանոցին, ապա կ'աշակերտի Ս. Աթոռիս Ժառանգաւորաց վարժարանին, ուր ուշադրութեան առարկայ կ'ըլլայ իբրեւ ուշիմ և լրջաբան աշակերտ: 1926էն առդին կը պաշտօնավարէր Ս. Աթոռոյ տպարանին մէջ որպէս զրաշար և տպագրիչ:

Թող Տէրը առաջնորդէ զինք իր կեանքի այս նոր ասպարէզին ու մեծ կոչումին մէջ, ըլլալու համար «Մշակ առանց ամօթոյ» Հայց. Ս. և Առաքելական եկեղեցւոյ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԳԻՐՔԵՐ

- Հասրնիսի Պատմութեան, Հայաստանի Մ. Ե. Ն., Բ. տպ. 1948, էջ 247,
գրին 150 ֆիլս.
- Հայաստանեայց եկեղեցին երկի եւ Այսօր, Եղիշէ Վրդ. Տէրտէրեան, տպ. 1948,
էջ 132, գրին 150 ֆիլս.
- Ակեղղամա, (Բանաստեղծական), Եղիշէ Վրդ. Տէրտէրեան, տպ. 1948, էջ 48,
գրին 100 ֆիլս.
- Վարդանանգ, (Քասերսիսի վեց արարով), Եղիշէ Վրդ. Տէրտէրեան, Վարդանանգ
Դոյամարտի 1500-ամեակի առիթով, տպ. 1951, էջ 56, գրին 150 ֆիլս.
- Ակամայ Անդրադարձութիւն Տ. Գրիգոր Պետրոս Ժն. Ազանանեան Կարսիցային իր
Հովուական Թուղթերուն առիթով, Եղիշէ Վրդ. Տէրտէրեան, տպ. 1951, էջ 42,
գրին 100 ֆիլս. [Այսօր]:
- Ժամայիրի Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ (Գրպանի), Զ. տպ. 1948, էջ 672,
գրին 350 ֆիլս (Լաթակաղմ):
- Տաղարան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Դ. տպ. 1949, էջ 383, գրին 350 ֆիլս.
- Տեսակ Տարեկան Հանդիսաւոր արարողութեանց Սրբոյ Յարութեան Տանարին, Դ.
տպ. 1950, էջ 105, գրին 150 ֆիլս.
- Դուռագներ Մանուկ Յիսուսի Կեանքէն, Եղիշէ Վրդ. Դուրեան, (Կաղանդիկ հայ
մանուկներու), Բ. տպ. 1950, էջ 62, գրին 100 ֆիլս.
- Նարեկ Աղօթամատեն Ս. Գրիգոր Նարեկացւոյ, արդի Հայերէնի վերածննդ՝ Թոր-
գոմ եպիսկոպոս, Դ. տպ. 1950, էջ 484, գրին 350 ֆիլս (Լաթակաղմ):
- Սարսուռներ, Դանիէլ Վարուժան, տպ. 1950, էջ 78, գրին 150 ֆիլս.
- Հացին երգը, Դանիէլ Վարուժան, տպ. 1950, էջ 62, գրին 150 ֆիլս.
- Գանձարան Աղօթից, Դ. տպ. 1951, էջ 167, գրին 100 ֆիլս.
- Տերունական Աղօթք, (Հոգեւոր մեկնաբանութիւն), Դրիգոր Սրբ. Հ. Գալուստեան,
տպ. 1951, էջ 148, գրին 200 ֆիլս.
- Խորենացի, Եղիշէ եւ Հ. Ներսէս Ակիմեան, գրեց Հրանդ Բ. Արմէն, տպ. 1951,
էջ 110, գրին 150 ֆիլս.
- Տեսութեան եւ Խաղաղութեան երգեր, Մատթէոս Զարիֆեան, տպ. 1951, էջ 96,
գրին 150 ֆիլս.
- Կեանքի ու Մահուան երգեր, Մատթէոս Զարիֆեան, տպ. 1951, էջ 109,
գրին 200 ֆիլս.
- Մալթրան վասն Մայր Աթոռոյ եւ Հայրապետի ազգիս, տպ. 1947, էջ 14, գրին
50 ֆիլս.

ՄԱՄԼՈՅ ՏԱԿ Է

Բանասէր - Հայկաբան - Պատմաբան՝ հանգուցեալ

ԿԱՐԱՊԵՏ ԳԱԲԻԿԵԱՆԻ

ԲԱՌԳԻՐՔ ՍԵԲԱՍՏԱՆԱՅ ԳԱԽԱՌԱԼԵԶՈՒԻ

Երկասիրութիւնը, պսակեալ Իզմիրեանց Գրական Մրցանակաւ

Ա. — Զայնաբանութիւն եւ Զայնախօսութիւն Սեբաստիայ բարբառի.
Բ. — Բառգիրք Սեբաստիայ Գաւառալեզուի. Գ. — Ժողովրդական առած,
հանելուկներ, վիճակ, բաղդատելուներ, շուտաստելուներ, բառախաղեր,
աղօթքներ, մանիներ, տաղեր, պարերգներ, օրերգներ, անէփոսներ, առակ-
ներ, հեքիաթներ, տեղական անուներ, ցանկ՝ յատուկ անուներու եւ Սե-
բաստիայ մականուներու եւայլն, եւայլն:

Վ.Ա.Ս.Ն. ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ «ՍԻՈՆ» Ի

Ամերիկայէն Օր. Մարի Շալաբեան «Սիոն»-ի բարգաւաճման համար հինգ (5) Ամերիկեան Տոլար կը նուիրէ:

Կը յայտնենք մեր շնորհակալութիւնները յարգելի նուիրատւին:

Վարչութիւն «ՍիՈՆ» Ամսագրի

«ՍԻՈՆ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԳՐԱՆԸ
ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

25-ԱՄԵԱԿ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՊԱՂՏՍՍԻ ՀԱՅ ԵՐԿՍԵՌ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄԻՈՒ-
ԹԵԱՆ: Տեղեկագիր Արծաթեայ Յորկինական Հանդէսի առիթով, 29 Յուլիս 1951:

ՏԱՐՕՆ, (Հաւաքածոյ ժողովրդական երգերու): Ա. Գիրք: Հաւաքեց եւ կազմեց
Արտաշէս Տ. Խաչատուրեան: Նուէր: Պէյրութ, տպ. «Յովեան», 1950, էջ 120:

ՆԵՂՈՒՑՆԵՐԸ, Վոսփոր եւ Տարտանել: (Թրքական Զրուիկները եւ Հայ Դատը):
Վ. Նաւասարդեան: Նուէր: Գահիրէ, տպ. «Յուսարբ», 1947, էջ 477:

ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻ ՀԱՅՅ. ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԵՏԻԿ-ՓԱՇԱՅԻ:
(1850-1950): Հրատարակութիւն Հոգաբարձութեան Կէտիկ-Փաշայի Հայց. Աւետ.
եկեղեցւոյ: Իսթանպուլ, տպ. «Աքին», 1950, էջ 126: Նուէր Մ. Յ. Շնորհոթեանէ:

ՄԵՆ ՀԱՅՐԱ ՊԱՏՈՒԵԼԻ ՅՈՎԱՒՓ ՄԱԼԷՋԵԱՆ, կենսագրականներ, դրուագներ եւ
գրութիւններ: Յուշագրեց Վ. Մալեզեան: Նուէր: Փարիզ, տպ. «Արքս», 1949, էջ 106:

ՊԱՅԲԱՐ ԳՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ, արդի ֆիզիքական դաստիարակութիւն: Թ. Թա-
թուլ: Նուէր: Պէյրութ, տպ. «Ռոթոս», 1950, էջ 32:

ՎԱՐԴԵՆԻՔ, Բերթուաներ: Նազենի Տէր Միրայէլեան: Նուէր: Փարիզ, տպ.
«Տէր Յակոբեան», 1950, էջ 157: (2 օրինակ):

ՄԱՐԱՆ ԺՐԱԳՆԵՐ, (Հաւաք գիւղի եղեռներ): Պօղոս Կատարիլեան: Նուէր: Նիւ-
եորք, տպ. «Կոչնակ», 1950, էջ 136: (2 օրինակ):

ԳԱՔԻԿԻ ԱՐԿԱՆՆԵՐԸ, (101 դրուագներ Պոլսահայ կեանքէ): Վահրամ Տատրեան:
Մատենաշար թիւ 4: Յրէզնօ, Բիվերտէյլ Հօլդ Բըպլիշինկ Բօմբանի, 1947, էջ 663:
Նուէր Օր. Ա. Տատրեանէ, (2 օրինակ):

ՀԻՆԳ ԹԱՏԵՐԱԽԱՂԵՐ ԵՒ ՅՐՈՒՄՆ ԷՋԵՐ Վահրամ Տատրեան: (Յետ մահու
հրատարակութիւն): Մատենաշար թիւ 6: Պոստոն, տպագրութիւն Հայկ Յ. Թումայ-
եան, 1950, էջ 350: Նուէր Օր. Ա. Տատրեանէ:

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ, (ակնարկ): Ա. Օրագեան: Հրա-
տարակութիւն եւ Նուէր «Հայ Մշակոյթի Բարեկամներու Մարմին»ի: Գահիրէ, տպ.
«Նոր Աստղ», 1951, էջ 16:

ՅՈՑՍ ՅԱՌԱՋՈՂ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ, հրատարակիչ Յովհաննէս Յ. Դավուգեան:
Գահիրէ, տպ. «Նոր Աստղ», 1950, էջ 169: Նուէր հրատարակիչէն:

ԿԵԱՆՔ ԵՒ ՄԱՀ, աշխատասիրեց Յովհաննէս Յ. Դավուգեան: Գահիրէ, տպ.
«Նուպար», 1947, էջ 656: Նուէր Յովհ. Յ. Դավուգեանէ:

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՂԸ, (պատկերազարդ): Հրատարակեց Յովհաննէս Յ. Դա-
վուգեան: Նուէր: Գահիրէ, տպ. «Նոր Աստղ», 1949, էջ 332:

ԿԵՐԹՍ, (վէպ): Արմիկ: Նուէր: Թէհրան, տպ. «Ալիք», 1950, էջ 76:

ԶԱՒԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏԱՄՆԵՐԿՈՒ ՏԱՐԻՆԵՐԸ: Հրատարակութիւն Զաւար-
եան Միութեան: Հայէպ, տպ. «Տիգրիս», 1948, էջ 1-7: Նուէր Վարժարանի հոգա-
բարձութենէն:

(Շարունակելի)